




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Рыба 5 Гамбург
универсальный
Гамбургский

1926



09 DEC 2009

24 SEP 2006

№ 2 ԿՈԼԿԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

8107

- 62

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՈՒՆԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՐԱՏԱՐԱՆԿԱԶՈՒԹՅՈՒՆ Զ. Լ. Կ. ՅԵ. Մ. ԿԵՆՏ. ԿՈՄԻՆ
ԿԻՑ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ

1926

Կենտ. Բյուրոն վորոշ փոփոխություններով հրատարակում է Համ. Պիոն. Կենտ. Բյուրոյի «ինչպես է կառուցված պատանի պիոներների կազմակերպությունը» գրքույկը, նպատակ ունենալով մի շարք գործնական տեղեկություններ տալ պիոներների կազմակերպչական կառուցվածքի կարեւորագույն խնդիրների մասին:



53189.66

Գրառեպլար № 696 ր.

Տիրած 3000.

Պետհրատի յերկրորդ տպարան Յերեանում -- 752

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բանվոր դասակարգի ուժը կազմակերպվածությունն է: Առանց մասսաների կազմակերպության պրոլետարիատը փոխնչ է: Յերբ կազմակերպված է, նա ամեն ինչ է:

ԼԵՅԻՆ

Տասնյակ ու հարյուր հազարավոր աշխատավորներ ի չերեխաներ, վոր համախմբված են պիոներական գրոշի տակ ու ջերմագին կերպով ձգտում են «փոխարինելու կոմյերիտիությանը» պահանջում են հմուտ ու ճարտար դեկավարություն, պահանջում են մի ուրույն (առանձնահատուկ) ձև՝ իլ ենց պատանեկական կազմակերպության համար: Հենց այն հանգամանքը, վոր պիոներների թիվը շարունակ աճում է, այդ արդեն ստիպում է ամենաուշագիտ վերաբերմունքը ցույց տալ առաջին հերթին պիոներական կոլլեկտիվների կազմակերպչական կառուցվածքի խնդիրներին:

Այնինչ, կոմյերիտականների, կուսակցականների ու մանկավարժների մի խոշոր մասը դեռ շատ քիչ է ծանոթ պիոներական կազմակերպության կառուցվածքին չգիտե, թե վերն է նրա հիմնական առանցքը, ինչ սկզբունքներով էն կառուցված է այլն:

**ՊԵՐՆԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐ-
ՑԵՐԸ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՅԵՎ ԼԵՆԻՆՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱՆ
ԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԵՆ:**

Կոմունիստական պատանեկության կազմակերպության ճիշտ կառուցումը անհրաժեշտ նախապայմանն է, այն ամուր հիմնաքարը, վորի վրա աշխատելով կարող կլինեն իրականացնել իրենց կոմունիստական նպատակները:

Վորքան ավելի շատերն իմանան ու հասկանան պիոներական կազմակերպության կառուցվածքը, նրա հիմնական սկզբունքները և հենց այդ սկզբունքների վրա կառուցեն պիոներական աշխատանքը, այնքան ավելի ամուր կլինի ԽՍՀՄ-ի պիոներական շարժումը, այնքան ավելի կընթանա պիոներների աշխատանքը՝ Համ. Կոմ. Կուսի և Լենկոմյերիտմիության ղեկավարությամբ:

Պիոներական կոլլեկտիվի ամեն մի կուլվար վոչ միայն ինքը պիտի շատ լավ իմանա պիոներական կազմակերպության կառուցվածքը, այլ և պարտավոր է պարզ, յերեխաներին հասկանալի բառերով բացատրել նրանց պիոներական կազմակերպության ելությունը, նրա հիմնական ըսկզբունքներն ու նպատակները:

Հարկավոր է պիոներների շրջանում բացատրել, պարզել ու բոլորին հասկանալի դարձնել պիոներական կոլլեկտիվի կազմը:

Պիոները, վորքան ավելի լավ իմանա իր կազմակերպության որենքներն, այնքան ավելի ճիշտ ու անսխալ կկառուցի այդ կազմակերպությունը, յերբ նա կհասունանա ու կդառնա կոմյերիտական, կուսակցական:

Պարզ է, վոր վոչ մի կազմակերպություն ինքնանպատակ չէ. այսինքն՝ կազմակերպությունը չի ստեղծվում հենց կազմակերպության համար: Ամեն մի կազմակերպություն, վորոնց թվում և պիոներական կազմակերպությունը

մի միջոց է միայն, համախմբելու, մի ամբողջութուն կազմելու այն ցրված, բաժան, բաժան ուժերը, վորոնք միևնույն ճամբան են բռնել, վորոնք գնում են դեպի նույն նպատակները:

Պիոներական կոլլեկտիվները կազմին ու կառուցվածքին ծանոթ լինելն առանձնապես անհրաժեշտ է այն կոմյերիտականին, վորը Կոմյերիտմիության հրահանգով սկսում է պիոներական աշխատանք կատարել:

Գիտակից բանվորը, յերբ սկսում է աշխատել մի նոր մեքենայի վրա, աշխատում է ամենաուշադիր կերպով ուսումնասիրել այդ մեքենայի կառուցվածքը, նրա բոլոր մասերը, վորի շնորհիվ ել այդ բանվորի համար ավելի հեշտ է լինում վարժվել նոր մեքենային ու աշխատել նրա վրա:

Ճիշտ այդպես ել պետք է վարվի ամեն մի կոմյերիտական, վոր սկսում է պիոներական աշխատանք տանել: Յեթե նա չիմանա պիոներական կազմակերպության կառուցվածքը, նրա ներքին կարգ ու կանոնը, յեթե չիմանա, թե վորն է պիոներական կազմի ուժն ու հենարանը, նա շատ անճշտություններ, սխալներ ու թերություններ կարող է գործել, իսկ կազմակերպչական աշխատանքների մեջ կատարած սխալները թուլացնում են պիոներական կազմակերպությունը, դանդաղեցնում են նրա աշխատանքների ճիշտ ընթացքը:

Վերջն է կազմակերպության ելությունը: «Կազմակերպության ելությունն այն է, վոր նրա ոգնությամբ առանձին-առանձին մասերը միանում են իրար, կապվում են իրար հետ»*):

Առանց կազմակերպության ուժերը ցրված ու բաժան-

*) Կերթենց և «Կազմակերպության սկզբունքները»:

բաժան կլինին, իսկ այժմյան հեղափոխական շրջանում չափազանց անհրաժեշտ է, վոր պրոլետարիատի հին, չեղիտասաղ ու պատանի սերունդների և բոլոր աշխատավորների գործն ու աշխատանքը միացած լինի:

Կովի մեջ հաղթող է դուրս գալիս այն կողմը, վորի բոլոր գործողութիւնները համաձայնեցրված են իրար հետ: Իսկ չեթե կովի ժամանակ ամեն մեկն առանձին գործի, իր ուզածն անի և բանի ահզ չդնի իր ընկերներին, ինչքան ել նրանցից ամեն մեկն ուզի անպատճառ հաղթել հակառակորդին, ինչքան ել տաք սրտով կովի, ելի այդ կողմը կհաղթվի իր հակառակորդից, անպատճառ կջախջախվի թշնամուց:

Նույն բանը վերաբերում է և ամեն տեսակի աշխատանքին ամեն մի կազմակերպության: Այնինչ, սոցիալիստական հսկայական շինարարութիւնը պահանջում է, վոր ամեն մեկն աշխատի համաձայն ընդհանուր ծրագրի, վոր ամեն մեկն իր տեղում լինի, ամեն մեկը խորհրդային աշխարհի ընդհանուր կառուցվածքի, ամբողջ մեքենայի ամուր ու ղեմակցուհի պտուտակը լինի:

Յեթե «պտուտակները» ցրված լինեն, ի հարկե, մեքենան չի կարող աշխատել: Յեւ միայն կազմակերպութիւնն է, վոր կարող է մարդկանց հավաքել մի ընդհանուր ղեկավարում մեքենայի մեջ, վորը կաշխատի առանց ընդհարումների:

Ամուր ու ճիշտ կառուցված կազմակերպութիւնը իր բոլոր անդամներին—և՛ մեծին և՛ փոքրին, շատ շուտով վարժեցնում է ընդհանուր կյանքի ու աշխատանքի և ներառնք զգում են արդեն, վոր իրենք կրկնկտրվի մի մասնիկն են, ամբողջի մի մասնիկն են: Կազմակերպութիւնը իր անդամներից ամեն մեկին ուժ ու առկունութիւն է տալիս և նեցուկ է լինում նրան: Մարդը կազմակերպու-

թիւնից դուրս մի փոշի չէ, վորին ամեն մի բոլե կյանքի փոթորիկը անդունդը կարող է գցել:

Ամեն վոր, վոր ցանկանում է իմանալ, թե ինչու և ինչպես է կառուցված պիտներական կազմակերպութիւնը, պետք է հասկանա այս բոլորը:

«Պիտներական շարժումը—ասում է ընկ. Կրուպսկայան,—շատ խոշոր նշանակութիւն ունի: Նա ընդգրկում է յերեխաներին այն հասակում, չերբ դեռ նոր է կազմակերպվում մարդը: Նա զարգացնում է յերեխաների հասարակական զգացմունքները, ոգնում է նրանց հասարակական վարժութիւն, փորձ ու հասարակական գիտակցութիւն է մշակում: Նա յերեխաների առաջ է դնում մի խոշոր նպատակ, այն նպատակը, վոր առաջացրել է մեր ժամանակաշրջանը, վորի համար պաշտարում է ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը: Այդ նպատակն է—աշխատավորութիւնն ազատագրումը, նոր կարգերի կազմակերպումը, այն պիտ կարգերի ուր չլինին դասակարգային շարժումներ, չլինի վոչ մի ճնշում ու ստրկացում, չլինեն շահագործում և բոլոր մարդիկ ապրեն իրականաբար յերջանիկ կյանքով»:

Պատանեկական կոմունիստական շարժումը, ինչպիսի խոշոր ու հսկայական նպատակներ ել վոր դնի իր առաջ, յեթե չունենա ճիշտ ու լավ կարգավորած կազմակերպութիւն, նա չի կարող իրականացնել այդ նպատակները, չի դառնա կուսակցութիւնն ազդեցութիւն հաղորդիչը, չի կարող Կոմյունիստիկութիւնը փոխարինողներ տալ:

Վերոհիշյալ նպատակների ու խնդիրների իրականացումը խոշոր չափով կախված է ճիշտ ու նպատակահարմար կերպով սահմանված կազմակերպչական ձևերից, բոլոր առանձին մասերի ճիշտ կցումից ու նրանց միահամուր, համաձայնեցրած գործունեութիւնից:

Ո՛Վ Ե ԿՍԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿՈՒՆԵԿՏԻՎՆԵՐԸ

ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԿՍԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ՍՏԵՂԾՈՒՄ Ե
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄ-ԿՈՒՍԻ ՂԵԿԱՎԱՐՈՒ-
ԹՅԱՄԲ.

Յերիտասարդական Կոմունիստական Ինտերնացիոնա-
լը դեռ 1921 թվին, պատանեկության մեջ աշխատանք տա-
նելու մասին արված իր վորոշումների մեջ նկատեց, վոր
«1) Պատանեկական Կոմունիստական խմբեր ստեղծելու
աշխատանքը մտնում է Յերիտասարդական Կոմունիստա-
կան կազմակերպության խնդիրների մեջ: 2) Յերիտասար-
դական կազմակերպությունը ստեղծում է բյուրո: Այդ
բյուրոն աշխատանքի մեջ է քաշում մանկավարժների, ծը-
նողների, կուսակցական ընկերների և ընդհանրապես բո-
լոր տեխնիկական ուժերը: 3) Բյուրոն իր գործունեյու-
թյան համար պատասխանատու է պատանեկական կազ-
մակերպության առաջ: Նյութականն ապահովելու գործը
ընկնում է բոլոր Կոմունիստական կազմակերպություննե-
րի վրա: 4) Կոմունիստական պատանեկության խմբերի
ընդհանուր ղեկավարությունն ամեն մի յերկրում զբաղն-
վում է բյուրոյի ձևով, վորին նշանակում է Կոմու-
նիստական յերիտասարդական կազմակերպության տեղա-
կան Կենտրոնական Կոմիտեն»*):

Համաձայն հենց այս կանոնների արտասահմանյան յեր-
կրների Կոմյերիտություններն ել ղեկավարում եյին Կո-
մունիստական պատանեկական կազմակերպությունները:

1922 թվի հոկտեմբերին Ռուսաստանի Կոմյերիտ-
միության 5-րդ համագումարը, մատնանշելով պիոներնե-
րի նպատակները, աշխատանքի ձևերը ղեկավարության

*) Տես «Կոմյերիտմիությունն ու պատանեկական շաժումը»
գրքուկը. հրատար. «Յերիտ. գվարդ.:

հարցում, հետևյալն ասաց. «Բոլոր խմբերը համախմբվում
են Ռ. Կ. Յե. Մ-ի տեղական կազմակերպությանը կից
պիոներական կազմակերպության մեջ, վորի գլուխ է
կանգնած կազմակերպության խորհուրդը, վորին նշանա-
կում է Ռ. Կ. Յե. Մ-յան Կոմիտեն»:

Այդ ժամանակ պիոներական կազմակերպությունը
ԽՍՀՄ-ում շատ փոքր եր և աշխատանքի փորձ չունե-
ր. (1922 թվի հոկտեմբերին ընդամենը կային մոտ 10.000
պիոներ): Ռ. Կոմ. կուսակցությունը զբաղված եր ուրիշ
խնդիրներով. նա աշխատում եր կյանք մտցնել այսպես
ասած՝ «նոր տնտեսական քաղաքականությունը» և մյուս
կողմից պայքարում եր 1921 թվի սովի հետևանքների
դեմ: Դրա համար ել չեր կարողանում բավարար ուշա-
դրություն դարձնել պիոներական աշխատանքների ղեկա-
վարության գործին:

Ռ. Կ. Կ. XII համագումարը պիոներներին ղեկավա-
րություն ցույց տալու մասին վորոշեց, վոր «Կոմյերիտ-
միության ղեկավարությանը «պատանի պիոներական»
շարժման աճումը կուսակցական կազմակերպությունների
առաջ խնդիր է դնում ամեն կերպ ոգնել այդ աշխատան-
քի ծավալմանը»: Համագումարն ընդգծում է, վոր պիոնե-
րական կոլեկտիվների անմիջական գործնական կազմա-
կերպիչը հանդիսանում է Կոմյերիտմիությունը՝ կուսակ-
ցության ղեկավարությամբ:

1924 թվի գարնան մոտերքին Կոմյերիտմիության մի
քանի կազմակերպություններ այն կարծիքին եյին, թե
պիոներական բյուրոները պետք է ստեղծվեն վոչ թե
Կոմյերիտմիությանը կից, այլ կից Կոմկուսակցությանը:

Պիոներական շարժման ղեկավարության հարցը վերջ-
նականապես բննեց միայն Ռ. Կ. Կ. XIII-րդ համագու-
մարը:

Ընկեր Բուխարինն իր պիտոներների մասին տված զեկուցման մեջ, Ռ. Կ. Կ. XIII-րդ համագումարում ասացավոր Վերանց մոտ (այսինքն պիտոներների ու կոմյերիտմիության) դեռ վերջնականապես վճռված չի այն հարցը, թե ով պիտի ղեկավարի պիտոներներին: Հակումներ կան, վորոնք նկատվում են Ուկրաինայում, իբրբ պատանի պիտոներների կազմակերպութունն անմիջականորեն կապվում է մեր կուսակցական կազմակերպութուններին, սակայն մեծ մասամբ պիտոներներին ղեկավարում է կոմյերիտական կազմակերպութունը: պատանի պիտոներների ղեկավարող կազմի մոտ 75 տոկոսը գտնվում է կոմյերիտականների ձեռքում: Բայց կուսակցութունը, վորպես մի ամբողջութուն, վոչ մի կապ չի ունեցել այդ շարժման հետ:

... Ինչ վերաբերում է ղեկավարությանն, ապա ընդհանրապես այնպիսի վորոշում պիտի հանել, վոր կուսակցութունն այդ կազմակերպութունները պիտի ղեկավարի Կոմյերիտմիության միջոցով:

Այս հարցի առթիվ կուսակցության համագումարում բավական լուրջ դիսկուսիա ստեղծվեց:

Ընկերների մի մասն այն կարծիքն էր հայտնում, վոր կուսակցութունն ինքն անմիջականորեն պիտի ղեկավարի պատանեկական շարժումը, այսինքն՝ շարժման ղեկավար մարմինները պիտի լինեն կուսակցական կոմիտեներին կից և պիտի աշխատեն նրանց անմիջական ղեկավարությամբ:

Սակայն ընկերների մեծամասնութունն այս տեսակետին դեմ արտահայտվեց:

Մեծամասնութունը գտնում էր, վոր պատանեկական շարժման ղեկավարութունը պիտի թողնել Կոմյերիտմիությանը, վորն այժմ արդեն ղեկավարում է գոյութուն

ունեցող բոլոր պիտոներական կազմակերպութունների մոտ 75 տոկոսը:

Ինչպես հայտնի չէ, այդ վեճը նոր չէ. դա սկսվել է դեռ 1920 թվին, գերմանիայում և այլ յերկրներում, վորտեղ պատանեկական խմբեր էյին ստեղծվում:

Ինտերնացիոնալ մասշտաբով այդ հարցն այնպես է լուծվել, վոր պատանեկական շարժումը ղեկավարում են Կոմյերիտմիությունները: Այդ նույն վորոշումն է արել և Ռ. Կ. Կ. համագումարը: Այս վորոշումը յիղել է վճ թե այն պատճառով, վոր կուսակցութունը շատ և ծանրաբեռնված և չի կարող զբաղվել պատանեկության մեջ աշխատանք տանելով. այլ այն, վոր հենց պատանեկական շարժման ընույթն արդեն պահանջում է, վոր նրա ղեկավարները յերիտասարդներ լինեն և վոչ մեծահասակներ:

Կոմյերիտականը, վոր ինքն արդեն վաղուց չի դուրս յեկել պատանեկական հասակից, վոր մի քանի տարի առաջ մտածում, խաղում և ապրում էր վորպես 12 տարեկան յերեխա, նա շատ ավելի լավ, շատ ավելի հեշտ ու ընկերաբար կարող է մոտենալ պիտոներին, քան թե մեծահասակ ընկերը: Անապաստան յերեխաների մեջ աշխատելու փորձը ցույց է տվել, վոր Կոմյերիտականները շատ ավելի հեշտությամբ են կարողանում ազդեցութուն ձեռք բերել այդ յերեխաների շրջանում, քան թե ամենալավ մանկավարժները: Ահա հենց այդ հասակի առանձնահատկությամբ էլ պիտի բացատրել ընդունված վորոշումը:

Իհարկե, դա չի նշանակում, թե կուսակցութունը կամ սոցգասի մարմինները պիտի բոլորովին ձեռք բաշեն յերեխաների մեջ աշխատանք տանելուց: Կուսակցութունը ուշի ուշով պիտի հետևի այդ ամբողջ աշխատանքներին, ուղղութուն պիտի տա, իր ժամանակին պիտի ուղղի սխալները, մի խոսքով, Կոմյերիտմիության միջոցով պի-

տի ղեկավարի այդ աշխատանքը: Իսկ Սոցդատվարը ամեն ինչ պիտի անի, վորպեսզի իր տրամադրությունն տակ յեղած հեղափոխական մանկավարժական ուժերը տրամադրի պատանեկական շարժմանը:

Այդ աշխատանքի ընթացքում միանգամայն անհրաժեշտ է ամենասերտ գործակցություն ստեղծել Սոցդատվարչության հետ: Ահա այսպես է վճռվում ղեկավարության խնդիրը»:

Ռ. Կ. Կ. XIII-րդ համագումարը հետևյալ վորոշումը կայացրեք. «Ինչ վերաբերում է շարժման կազմակերպչական ձևերին — կուսակցությունը այդ շարժումը պիտի ղեկավարի Կոմյերիտմիության միջոցով, վորն իր ներքին աշխատանքը պիտի լիովին համաձայնեցնի սոցիալական դատարարական մարմինների հետ»:

Յեղնելով այդ վորոշումից՝ 1924 թվի ոգոստոսին Ռ. Կ. Կ. կենտկոմը հաստատեց Ռ. Կ. Յե. Մ. կենտկոմի առաջարկած պիոներական կազմակերպության կառուցվածքը և ընդունեց հետևյալ վորոշումը.

«Թե կուսակցության և թե Կոմյերիտմիության հատուկ ոչադրությունն առարկան պիտի դառնա շարունակ ծավալվող պատանեկական կոմունիստական շարժումը, վորն արդեն սկսել է ընդգրկել վոչ միայն բանվորական շրջանների, այլև մյուս սոցիալական խավերի յերեխաներին: Անհրաժեշտ է, վոր կուսակցությունը կազմակերպված ղեկավարություն ցույց տա այդ շարժմանը, անհրաժեշտ է, վոր և կուսակցությունը և արհմիություններն ու պետական մարմիններն ամեն կերպ նպաստեն ու աջակցեն կոմյերիտմիությանը, վոր նա կարողանա այդ շարժումը տարածել թե քաղաքում և թե գյուղում:

Կուսակցության գաղափարական ղեկավարությունը պետք է ապահովի պատանեկական կոմունիստական շարժ-

ման հիմնական նպատակի իրականացումը. այն է՝ լինել կոմունիստական դատարարականության դպրոց: Գործնականում այդ ղեկավարությունը պետք է իրականանա Ռ. Կ. Յե. Մ-յան միջոցով, վորպես բանվորագյուղացիական յերիտասարդության կազմակերպություն, վորն իր տրամադրություններով, հոգեբանությունը ու ապրումներով շատ ավելի մոտ է պատանիներին: Կուսակցական կազմակերպություններն ամեն կերպ պիտի ոգնեն ու ակտիվ կերպով մասնակցեն աշխատանքներին Ռ. Կ. Կ. XIII համագումարի և Ռ. Կ. Յե. Մ-յան 6-րդ համագումարի վորոշումների հիման վրա»:

Այսպիսով արդեն վճռվում է այն հարցը, թե ով է ղեկավարելու պիոներական կազմակերպությունները:

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՂԱԾՔԻ ԶԵՎԵՐԸ

Պատանի պիոներների կազմակերպությունը չի կարող նման լինել մեծերի կազմակերպությանը: Չափազանց վատ կլինի, յեթե նա մեծահասակների կազմակերպության պատճենը լինի:

Ն. Կուսպոկայա

Բայց յեթե անհրաժեշ է, վոր պատանեկական շարժումն ել իր կազմակերպությունն ունենա, — միթե՞ դա նշանակում է, վոր այդ կազմակերպության ճեղքն ել պիտի ամբողջապես ու բոլորովին աչալես լինեն, ինչպես մեծերի կազմակերպություններին է — ինչպես կուսակցությանը կամ Կոմյերիտմիությանն է:

Չի կարելի կուրորեն հետևել մեծերի կազմակերպությանը և ճիշտ նույնպիսի կազմակերպություն ստեղծել պատանեկական շարժման համար: Դա շատ մեծ սխալ կը

լինի և ուժից վեր ծանրություն կրնի պատանինների թույլ ուժերի համար:

Պատանեկական կոմունիստական կազմակերպությունը իր կառուցվածքով պետք է լիովին համապատասխան լինի յերեխաներին, նրանց թույլ ու նոր զարգացող ուժ-գանիքին:

Ռ. Կ. Կ. Կենտ. կոմը իր ոգոստոսյան վորոշումներով պիտներական կազմակերպության կազմակերպչական կառուցվածքի մասին հետևյալը մատնանշեց.

«Պիտներական կազմակերպությունները պետք է կառուցվեն յերեխաների առողջ ինքնագործունեություն սկզբունքով ներքևից և հաստատուն ու գործնական դեկավորության սկզբունքով վերևից, վորը նկատի պիտի ունենա հեղափոխական մանկավարժության վործն ու պահանջները: Անհրաժեշտ է վճռական կերպով պայքարել մեծերի ու կոմյերիտիության կազմակերպությունների ձևերին նմանվելու փորձերի դեմ, պայքարել այդ կազմակերպությունների աշխատանքների բովանդակության, և կազմակերպչական ձևերի կուրորեն յուրացման դեմ»:

Ուշ դրությաք քննե՛ք, թե ինչ է պահանջում մանկավարժությունը պատանեկական կազմակերպության կազմակերպչական ձևերից:

Հեղափոխական մանկավարժությունն առաջին հերթին պահանջում է, վոր պիտներական կազմակերպության կառուցվածքը հարմարվի յերեխայական հասակի առանձնահատկություններին ու պահանջներին, վոր նա, (այդ կազմակերպությունը) յերեխաների ուժին համապատասխան լինի:

Հեղափոխական մանկավարժությունը պահանջում է նաև, վոր պատ. շարժման կազմակերպչական ձևերը զարգացնեն յերեխաների լայն ինքնագործունեությունը, վոչ թե

խեղդեն, այլ առաջացնեն պատանեկական լայն ակտիվություն, յերեխայի ուժերին լայն ասպարեզ տան, վորպես-զի այդ ուժերը յերեան գան և հարկավոր ուղին բռնեն:

Հեղափոխական մանկավարժությունը պահանջում է, վոր պատանիների միավորումը ինքնակազմակերպման բունութ կրի, հիմնված լինի կամավոր սկզբունքով, վոր բնությամբ ու «վերին հրամանով» վոչ վոք չքվի պատանեկական խմբերից, վոր ակներև լինի հենց իրենց—յերեխաների շահագրգռվածությունը: Այլ կերպ կստացվի մի խնամակալություն յերեխաների վրա, մի կազմակերպություն յերեխաների համար և վոչ պատանեկական ինքնակազմակերպություն:

Հեղափոխական մանկավարժությունը պահանջում է նաև, վոր պատանեկական կազմակերպության բոլոր ձևերն ու ամբողջ կառուցվածքը իր բոլոր մասերով հետաքրքիր ու գրավիչ լինի պատանիների համար:

Հեղափոխական մանկավարժությունը պահանջում է, վոր պատանեկական խմբերի մեջ գրավվեն յերեխաների լայն մասսաները: Պատանեկական կոմունիստական կազմակերպությունը առանձնացած է յանց չի աշխատավորների յերեխաների համար: Նա մասսայական կազմակերպություն է, վորովհետև միայն մասսայական լինելով, միայն պրոլետարական յերեխաների լայն մասսաներն ընդգրկելով նա (այդ կազմակերպությունը) կարող է իրականացնել իր հսկայական դաստերակչական նպատակները, կարող է պայքարել պրոլետարիատին խորթ ազդեցությունների դեմ: Մասսայականությունն անխուսափելիորեն իր հերթին պահանջում է և կազմակերպչական ձևերի մասսայականությունը:

Պատանեկական խմբերի կազմակերպչական կառուցվածքը պիտի այնպես լինի, վոր հաստատապես պաշտ-

պանված լինի Կոմյերիտմիության ղեկավարությունը, վորպեզի պիոներական կազմակերպություն ամեն մի մասում, նա ամեն մի քաղաքում զգա պիոներական կյանքի զարգերակը: Պատանեկական խմբերի կազմակերպչական ձևերն այնպես պիտի կազմված լինեն, վոր Կոմյերիտմիությունն նրանց վրա լիակատար և ամուր կազմակերպված ազդեցություն ունենա, որգանապես կապված լինի նրանց հետ ցածից մինչև ամենաբարձր: Պիոներական կազմակերպությունների կազմակերպչական կառուցվածքը պիտի պարզորեն ցույց տա, վոր պատ. կազմակերպություններին ղեկավարելը Կոմյերիտմիության աշխատանքների մի մասն է. վոր պատանիների մեջ աշխատանք տանելու գործը Կոմյերիտական պարտականություններից մեկն է:

Դա բավական չէ, պիոներական կազմակերպությունը մեծածավալ ու փքուն չպետք է լինի, այլ պետք է լինի ճկուն, այնպես, վոր արագությունը կարողանա հարմարվել ամեն տեսակ աշխատանքի, ամեն պայմաններում ու հանգամանքներում: Այնպես պիտի լինի, վոր պիոներական կազմակերպության աշխատանքը կատարվի արագ ճիշտ ու տնտեսաբար: Դրա համար պիոներական կազմակերպության կազմակերպչական մեխանիզմը իր թվով փոքր պիտի լինի, վորովհետև կազմակերպության հիմնական բնիքը վորքան փոքր լինի (մասնավորապես պատանեկական) այնքան ավելի ճկուն ու ամուր կլինի ամբողջ կազմակերպությունը: Վորքան ավելի լավ լինի դրված կազմակերպության հիմնական միավորի կառուցվածքը, այսինքն ավելի ճիշտ ու առանց ընդհատումների կարող է աշխատել ամբողջ կազմակերպությունը:

Դրա հետ միասին պիոներական կազմակերպության կառուցվածքը պետք է լինի պարզ ու հասկանալի ամեն


մի պիոներին համար և ամեն մի մասնակցի պիտի վորոշ պարտականություն տա:

Հենց այս վերոհիշյալ սկզբունքներով. ել կառուցված է Վ. Ի. Լենինի անվան պատանի պիոներների կոմունիստական պատանեկական կազմակերպության կառուցվածքը - ողակ, կոլլեկտիվ, Լենկոմյերիտմիության կոմիտեյին կից պիոներական բյուրո, մի շարք արտաքին նշաններով (նշանակներ, դրոշակ, տարազ յեղ այլն):

Ողակը, կոլլեկտիվը ԼԿՅԵՄ. կոմիտեյին կից պիոներական բյուրոն—այդ բոլորը պիոներական կազմակերպության գլխավոր հիմքերը, հիմնական առանցքն են:

Պատանի պիոներների բոլոր գավառական, նահանգական, հանրապետական ու համամիութենական կազմակերպությունները կրում են Վ. Ի. Լենինի անունը: Առաջ ստրուկների, սուսերամարտիկների (гладиатор) առաջնորդն էր, ապրել է 2000 տարի սրանից առաջ և նահատակվել է Հռոմի հարուստների ու կալվածատերերի դեմ մղված կռիվում: 1923 թվի հունվարի 23-ին ՌԼԿՅԵՄ-ան կենտ-կոմի պլենումի վորոշմամբ պատանեկական կոմունիստական խմբակները վերանվանեցին և կոչվեցին ընկ. Լենինի անունով: Ռ. Կ. Կ. XIII Համագումարը 1924 թ. Լենինի անունով: Ռ. Կ. Կ. XIII Համագումարը 1924 թ. մայիս ամսին հաստատեց այդ վորոշումը և ահա այդ ժամանակներից պիոներական բոլոր կազմակերպությունները կրում են ընկ. Լենինի անունը:

Կրել ընկ. Լենինի՝ աշխատավորության խոշորագույն առաջնորդի, մարդկության կյանքի նոր դարաշրջանի առաջնորդի անունը, դա շատ մեծ ու խոշոր նշանակություն ունի պիոներների համար, վոր նրանց վրա պատասխանատվություն է գցում լրենց բոլոր քայլերի, ամեն մի վարմունքի համար: Կրել ընկ. Լենինի անունը,



ВИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

նշանակում է ամբողջ կազմակերպութամբ պորձնակահում իրագործել Իլիչի պատգամները, կոմունիստական կուսակցության ու կոմերիտմիության գրույի տակ մինչև վերջը պայքարել կոմունիզմի համար:

ԽՍՀՄ-ում պատանեկական կոմունիստական խմբերը «Պատանի պիոներ» անունն են կրում:

«Պատանի պիոներ» անունն առաջին անգամ 1922 թ. ընդունել է ՌԿՅԵՄ-ի Մոսկվայի կոմիտեն, այնուհետև այդ կոչումը հաստատել է ՌԿՅԵՄ-յան 5-րդ համառուսական համագումարը (1922 թ.) և ապա՝ ՌԿՅԵՄ 6-րդ համագումարը (1924 թ.):

Խոչ է նշանակում «պիոներ» բառը և ինչու են վերցրել այդ բառը:

Պիոներ դա մի մարդ է, վր, գնում է ուրիշների առաջից և ճանապարհ է հարթում իր հետևից չեկողների համար: Կոմունիստական կուսակցությունը՝ բանվոր դասակարգի ավանգարդը, նույնպես «պիոներ է»:

Նա գնում է ամբողջ շահագործած աշխատավորության առաջից և տանում է նրան դեպի մի նոր ճանապարհ, դեպի կոմունիստական հասարակության տանող ճանապարհը: Կոմունիստական կուսակցությանը ջերմագին կերպով ոգնում է կոմերիտմիությունը:

Այդպես էլ պատանեկական կոմունիստական կազմակերպության ամեն մի անգամ պիտի զգա, վոր ինքր պիոներն է, պետք է որինակ վերցնի Կոմունիստական կուսակցությունից ու կոմերիտմիությունից և ոգնի նրանց:

«Մենք, պիոներներս պայքարում ենք վողջ աշխարհում՝ նոր աշխատանքային հասարակություն ստեղծելու համար»: Այս գաղափարն է դրված պիոներական աշխատանքի բովանդակության մեջ և դա իր մեծությամբ ու

ընդլայնացումով պիտի իրեն չենթարկի պատանիների բոլոր զգացմունքները:

Պիոներները «պատանի» չեն կոչվում, վորովհետև նրանք դեռ դեռահաս ու մատաղ պատանիներ են:

«Պիոներ» կոչումը ավելի ճիշտ ու լավ է համապատասխանում պատանեկական կոմունիստական կազմակերպության հեղափոխական ելույթյանը, այն կազմակերպության, վորն առաջին անգամ մասնակցում է սոցիալիստական հասարակության շինարարությանը:

ԿՈՒՆԵԿՏԻՎ

Լենինի անվան պատանեկական կոմունիստական խմբերի կազմակերպչական կանոնադրությունը, վոր հաստատել են ՌԿՅԵՄ կենտկոմն ու ՌԿԿ կենտկոմը, ընդգծում է, վոր կալեկտիվը «պատանեկական կոմունիստական շարժման հիմնական բջիջն է»:

Պիոներական կոլեկտիվը բաղկացած է 4-5 ողակից*) վորոնք համախմբում են 40—50 հոգի-տղա և աղջիկ յերեխաներ: Յեթե ձեռնարկության կամ հիմնարկին կից շատ յերեխաներ կան, առնք՝ 150 200 և ավելի այդ դեպքում կարող են կազմել ուրիշ կոլեկտիվներ ևս, վորոնք նույնպես կունենան իրենց ղեկավարները և աշխատանքները կհամաձայնեցնեն իրար:

Խոչու պիտի սահմանափակել կոլեկտիվի անդամների թիվը:

Պիոներական կոլեկտիվը պատանեկական կոմունիստական շարժման հիմնական բջիջն է. դրա համար էլ, վորպես կազմակերպության միավոր, կոլեկտիվը պիտի ձևուն ու ամուր լինի, պիտի կարողանա արագորեն հարմարվել ամեն տեսակ աշխատանքի, բոլոր պայման-

*) Ողակի մեջ մտնում են 10 հոգի:

ներում և հանգամանքներում, Ահա թե ինչու պիտո՞ւն երական ողակում պիտի լինի 10-հոգի, իսկ կոլեկտիվում 40—50-ից վոչ ավելի: Այդ թիվը հնարավորութունն է տալիս, վոր պատանեկական կազմակերպութունը ու նրա ստորին բջիջներն աշխատեն ճիշտ, ուղիղ և արագ:

Կոլեկտիվը իրեն շրջապատող յերեխաների ու հասակավորների մասսաների մեջ ագիտացիա յե մղում թե խոսքով և թե գործով: Կոլեկտիվը զարգացնում է իր անդամ պիտո՞ւնների գիտակցութունը, պատրաստում է նրանց Կոմյերիտմիութուն մտնելու: Կոլեկտիվը ակտիվ կերպով մասնակցում է հանրապետութայն շինարարութայն աշխատանքներին: Յեվ այդ կոլեկտիվը կազմված է վոչ թե հասակավորներից, այլ պատանիներից: Դրա համար ել այս ամենը պահանջում է, վոր պիտո՞ւներական կոլեկտիվը մի աջնպիսի առանձնահատուկ կառուցվածք ունենա, վոր ընդգրկի այդ ամբողջ բարդ աշխատանքը և համապատասխան լինի յերեխաների ուժերին, նրանց որգանիզմին: Դրա համար է, վոր պիտո՞ւներական կոլեկտիվում լինում են 40—50 հոգի, այսինքն՝ սահմանափակված վորոշ քանակությամբ յերեխաներ:

Պիտո՞ւներական կոլեկտիվի սահմանափակ թիվը հնարավորութուն կտա հետևել պիտո՞ւներական բարդ աշխատանքի համաչափությունը: Հնարավոր կլինի ճիշտ ու անսխալ հաշվի առնել կատարված աշխատանքն, և վերջապես այդ սահմանափակության շնորհիվ կապահովի և կուռ գիսցիւլինան՝ կարգապահութունը պիտո՞ւնների շարքերում:

40—50 հոգուց բաղկացած կոլեկտիվը հնարավորութուն է տալիս պիտո՞ւններին առանց դժվարության անձամբ մտնակցել իրենց աշխատանքների ղեկավարմանը: 40—50 հոգուց կազմված կոլեկտիվը ավելի հեշտ կարող է

ղեկավարել պիտո՞ւներական կոլեկտիվը: Բայց յեթե նա իր խմբում ունենա 150 և ավելի յերեխա, ամենևին չի կարող գլուխ հանել գործից, չեք կարող ամենքին ճիշտ ու ուժերին համապատասխան խնդիրներ տալ և չի կարող հետևել, թե աշխատանքները ճիշտ են ընթանում թե՛ վոչ:

**ՊԻՏՆԵՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԿՏԻՎԸ ԵՆԵՐԳԻՍՑԻ ԿԵՆՏՐՈՆԸ
ՈՒ ՀԵՆՍԱՐԱՆԸ Ե ՊԻՏՆԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Նա բոլոր յերեխաներին ակտիվ աշխատանքի մեջ է և քաշում, նա կոլեկտիվ կերպով հսկում է յուրաքանչյուր պիտո՞ւնների աշխատանքներին:

Բայց այդ ամենը կոլեկտիվը կարող է անել միայն այն ժամանակ, յերբ նրա մեջ կան 40—50 պիտո՞ւն, յերբ նա բաղկացած է 4—5 ողակից: Իսկ յեթե կոլեկտիվում 100—150 պիտո՞ւն լինի, պիտո՞ւներական այդպիսի հիմնական բջիջը ուժ և ոգնութուն չի կարող տալ ամեն մի պիտո՞ւնին, վորովհետև նրանց թիվը շատ կլինի, բոլորի հահամար ել դժվար կլինի իրար ճանաչել, դժվար կլինի բոլորին աշխատանք տալ, դժվար կլինի բոլորին համախմբել, կստացվի մի մեքենայական միութուն միայն:

Պիտո՞ւներական կոլեկտիվը յերեխաների մի հասարակ միութուն չէ — իրենց ու իրենց զվարճությունների համար:

Պիտո՞ւներական կոլեկտիվը — որինակ է ուրիշ չկազմակերպված յերեխաների համար: Պիտո՞ւներական կոլեկտիվը իրեն շրջապատող յերեխաների մասսաների կազմակերպիչն է: Պիտո՞ւներական կոլեկտիվը — դա յերեխայի ակտիվության կենտրոնն է իր շրջապատի միջավայրում:

Այդ ամբողջ հսկայական ու պատասխանատու աշխատանքը կոլեկտիվը հաջողությամբ կարող է իրականացնել միայն այն ժամանակ, յերբ նա ինքը բավականաչափ ճկուն ու համախմբված կլինի, յերբ նրա մեջ չի լինի անաղին

թվով, համարյա թե իրար չճանաչող յերեխաների մի մասսա, այլ կլինեն սերտորեն իրար հետ կապված ու համախմբված, հաշտ ու խաղաղ մի խումբ—բաղկացած 40—50 յերեխայից:

Յեթե կոլեկտիվի մեջ այդպես մեծ թվով յերեխաներ լինելին, անխուսափելի կերպով ողակների մեջ ել պիտի ավելի շատ պիտենաներ լինելին, մի ողակի մեջ 10 հոգու փոխարեն կստացվի 15—20 հոգի և նույնիսկ ավելի: Իսկ այդպիսի ողակը 12—14 տարեկան ողակավարը շատ դժվարությամբ կղեկավարի, վորովհետև նա, այդ ողակավարը դեռ յերեխա չե, ավելի թույլ և զարգացած քան հասակավորը:

Ողակի մեջ մեծ թվով պիտենաներ լինելը դանդաղեցնում ու քայքայում, կազմալուծում և ողակի աշխատանքները. քանդվում, խորտակվում և ողակների ամբողջությունն ու սերտությունն իսկ դրանով ել քայքայում և նաև ամբողջ կոլեկտիվի ամբողջությունը, կազմակերպվածությունը: Շարունակ պիտի նկատի ունենալ, վոր պիտենաները յերեխաներ են և վոչ հասակավորներ:

Կարող ե արդյոք հաջողությամբ զարգանալ պատանեկական ինքնագործունեությունը, յերբ կոլեկտիվի անդամների թիվն անսահմանափակ լինի, յերբ նա անընդհատ փրվի, լայնանա ավելի ու ավելի, ժամանակ չունենալով մարսել, լիովին բավարարել իր շարքերը մտած յերեխաներին: Ի հաջիե, վոչ:

Միայն այն կոլեկտիվում, ուր կան վորոշ թվով յերեխաներ, վոչ ավելի 40—50-ից վորոնք կազմում են 4—5 ողակ, միայն այդպիսի կոլեկտիվում կարող ե փարթամ կերպով ծաղկել պիտենաների ինքնագործունեությունը, վորովհետև դրա համար շատ ավելի նարմար պայմաններ կան:

Ողակավարն ու նրա ոգնականը, վորոնք վոչ թե նշանակում, այլ ընտրվում են յերեխաների կողմից, վերընտրվում են յերեք ամիս մի անգամ: Ողակավարն ինքն և ղեկավարում իր ողակը: Բոլոր ակտիվ յերեխաներն աստիճանաբար ողակավարության գործի մեջ են քաշում: Ողակավարները մտնում են կոլեկտիվի խորհրդի մեջ, մի մարմին, վոր ղեկավարում և ամբողջ կոլեկտիվային կյանքը: Ողակում և կոլեկտիվում, հենց իրենց՝ յերեխաների մասնակցությամբ միասին կազմվում և աշխատանքի ծրագիր, վորովհետև կոլեկտիվի անդամների քչությունը թույլ և տալիս այդ անել:

Անհրաժեշտության սահմաններում և հենց իրենց՝ պիտենաների պահանջով կազմվում են հանձնաժողովներ—խմբագրական, տնտղապահական, և այլն: Կոլեկտիվի ղեկավարը հրահանգներ և տալիս ողակավարներին, հետևում և գործի ընդհանուր ընթացքին և բոլորովին չի արգելում վոր յերեխաներն իրենց ինքնագործունեությունը, յերևան բերեն:

Անսահմանափակ կոլեկտիվները չեն համապատասխանում հեղափոխական մանկավարժության պահանջներին:

Յերեխաներին կոմունիստական գիտակցությամբ դաստիարակություն տալը, կոլեկտիվիստական բնագոյների դաստիարակությունը պիտենաների միջից կոլեկտիվիստական վոգով սկսնակներ դաստիարակելը, այսինքն վարժական վոգով սկսնակներ դաստիարակելը, կազմակերպվել ու կարողանալ գործել կոլեկտիվորեն, կազմակերպված, իր կամքը կոլեկտիվին յենթարկելով, իր նախաձեռնողությունը կիրառել կոլեկտիվի միջոցով և այլն: Այս նողությունը կիրառել կոլեկտիվի կարող և իրականամենն ավելի լիակատար չափերով կարող և իրականանալ սահմանափակ թվով անդամներ ունեցող կոլեկտիվում, նաև սահմանափակ թվով անդամներ ունեցող կոլեկտիվում այդ վորովհետև 40—50 անգամ ունեցող կոլեկտիվում այդ անդամները ջոկվում են և վոչ թե մեքենայորեն կապվում

իրար հետ, վորովհետև նա, շնորհիվ իր խիստ կերպով վորոշված ու սահմանված թվին շատ ամուր ու սերտ է ձուլված իր ներսում, գիտե իր անդամներից յուրաքանչյուրին և հետևում է նրանց ամեն մեկի աշխատանքին: Ահա հենց այս է, վոր չկա այն կոլլեկտիվում, վորի անդամների թիվը անսահմանափակ է: Կարո՞ր է արդո՞ք յերեխաներին կոլլեկտիվիստական գիտակցութիւն պատրաստել յերեխաների մեջ, այն կոլլեկտիվը, վորը վորոշ ձև չունի, անդամների թիվը անսահմանափակ է և դարձել է յերեխաների մի անկազմակերպ խումբ, վորը արտաբուստ միայն կրում է «կոլլեկտիվ» անունը: Իհարկե, վո՞չ:

Պիոներական կազմակերպչական ձևերը զգալի չափով հենվում են մանկական հասակի առանձնահատկութիւնների վրա, վորովհետև «մենք կառուցում ենք յերեխաների աջակցի մի ինքնակազմակերպութիւն»,—ասում է ընկ. Տարխանովը,—վորը հենվի նրանց առանձնահատուկ շահերի վրա: Դա պարտադիր դպրոց հաճախումը չէ, յերբ կարելի չէ յերեխային ստիպել, հաշկադրել, կարելի չէ ուղարկել դպրոց, թեկուզ և դպրոցը չգրավեր նրան և վոչինչ չտար, թեկուզ այդ դպրոցը յերեխայի ակտիվութիւնը վոչ մի սնունդ չտար, հնարավորութիւն չտար նրան ընդլայնել իր հերոսական ձգտումները և այլն և այլն: Պատանեկական շարժման մեջ ուղակիել դուք յերեխային չեք կարող: Վորպեսզի նա մտնի այդ շարժման մեջ, հարկավոր է, վոր նա համապատասխանի այդ յերեխայի հակումներին, վոր նրա ակտիվութիւնը սնունդ տա. հնարավորութիւն տա յերեխային իր հերոսութիւն ձգտումները, վոր նա հնարավորութիւն տա զարգացնել յերեխայի այն բոլոր ինստինկտները, զգացումները, վոր կան նրա մեջ:

Առանց մեզ ել յերեխաները խաղում են խմբերով,

բայց մեր անելիքն է—նրանց խաղին մեր ցանկացած ուղղութիւնը տալ: Առանց մեզ ել յերեխաները հերոսութիւն են ձգտում, բայց հարկավոր է այդ ձգտմանը մեր ցանկացած ուղղութիւնը տալ: Առանց մեզ ել յերեխաները տարվում են բարի նախանձով մրցում են իրար դեմ, միայն հարկավոր է այդ մրցմանը ճիշտ ընթացք տալ: Յեթե մենք այդ անենք, ապա մեր շարժումն ամուր կլինի, մեր շարժումը հենց իրենց յերեխաների շարժում կլինի, վորովհետև նա հիմնված է նրանց շահերի վրա:

Յեւ ի հարկե, պատահական բան չէ, վոր պիոներական կոլլեկտիվն իր ներսում բաժանվում է հատուկ մանր խմբերի—ողակների:

«Մենք,—ասում է ընկ. Տարխանովը,—յեկել ենք այն յեզրակացութիւն, և գործնականում ել ստուգել, վոր յերեխաների համախմբման համար ամենաբարեհաջող ու ամենա արդյունավետ ձևն այն է, վոր յերեխաները համախմբվեն ողակներով, տասնյակներով, մանր խմբակների մեջ, 8—10 հոգուց բաղկացած ողակների մեջ, վորտեղ իրենք կնտրեն իրենց ղեկավար և իրար հետ ձուլվելով կկազմեն մի խումբ, (այսինքն՝ կոլլեկտիվ: Յերեխաներին այսպես մանր բջիջների բաժանելը ի՞նչ առավելութիւններ ունի: Նախ և առաջ նա յերեք հիմնական առավելութիւն ունի. առաջին—դա մեզ հնարավորութիւն է տալիս յերեխաներին համախմբել վոչ պատահականորեն, վոչ թե ըստ հասակի ու այբբենական կարգով, այլ այն միաձուլութիւն նշանով, վորն արդեն գոյութիւն ունի. միասին խաղալը, միասին մի խմբակում սովորելը, միասին աշխատելը, միևնույն փողոցում ապրելը և այլն: Ահա այս հանգամանքը հնարավորութիւն է տալիս յերեխաներին կապել իրար հետ: Յերկրորդ—ինչո՞ւ մենք այն յեզրակացութիւն չեկանք, վոր անհրաժեշտ է յերեխաներին

բաժանել նախնական ողակներին մեջ: Խնդիրն այն է, վոր այդ հասակում յերեխաները չափազանց անդիսցիպլին են, մեծ մանկավարժ պիտի լինի, վոր կարողանա նրանց իրեն յենթարկել: Այնինչ—այդ շարժումը ղեկավարում է կոմյերիտմիությունը, իսկ նրա մեջ չկան այդպիսի աշխատավորներ: Պրա համար ել մենք անհրաժեշտ գտանք յերեխաներին համախմբել մանր խմբակների մեջ, վորտեղ նրանք հենց իրենք կարողանան առաջ քաշել իրենց ղեկավարին: Յերրորդ—քանի վոր յերեխաների մեջ կա բարի նախանձ ու մրցություն, ողակների բաժանած լինելը սրտիպում է ամեն մի յերեխայի ցանկանալ, իր ողակն առաջադիմի և այսպիսով մրցություն է ստացվում ողակների միջև»:

Ամեն մի կոլեկտիվի աշխատանքների համար նրա կողմարը պատասխանատու չէ Լենկոմյերիտմիության բջջի առաջ: Կողմարին նշանակում է ԼԿՅԵՄ բջջը (հնարավորության դեպքում այնպիսի ընկերոջ, վորը Համ. կոմկուսի թեկնածու լինի): Բաց կողմարը ամենևին էլ կոլեկտիվի «հրամանատարը» չէ, ինքնակամ կերպով չի ղեկավարում կոլեկտիվի աշխատանքները: Նա՝ կողմարը, կոլեկտիվի ամբողջ կյանքը ղեկավարում է կոլեկտիվի խորհրդի միջոցով: Կոլեկտիվի խորհուրդը կազմվում է ողակավարներից կողմարից և նրա ոգնականից և ԼԿՅԵՄ-ի բյուրոյի անդամը:

Կոլեկտիվի խորհուրդը հսկայական նշանակություն ունի պիոներների ակտիվության զարգացման գործում, վորովհետև նա վարժեցնում է ղեկավարել իրենց աշխատանքները, և հենց իրենց՝ անչափահաս յերեխաների միջից առաջ է քաշում ղեկավարների նոր կադրեր:

Պիոներական կազմակերպության մեջ կոլեկտիվի խորհուրդը վոչ միայն կոլեկտիվի գլուխ է կանգնած, այլ և միաժամանակ նա մի գպոց է, վորտեղ ողակավարներ են

պատրաստվում, ողակների առարկա աշխատանքները տանելու համար:

ՎՈՐՏԵՂ Ե ԿՈԼԼԵԿՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Պիոներական կոլեկտիվ կազմակերպվում է սովորաբար գործարանին կից, հանքագործարանին կից, կոմյերիտական կամ արհմիութենական ակումբին կից, մանկատանը կից և այլն: Անմիջականորեն դպրոցներում կոլեկտիվներ չեն կազմակերպվում, վորովհետև այդ դեպքում կոլեկտիվը շատ թույլ կապ կունենա հասարակական կյանքի, բանվորների, կոմյերիտմիության և կուսակցության հետ, այդտեղ նա «ինքն իր ջրի մեջ կխաշվի» և շարունակ մանկավարժների «հեղինակության» և վարչական ճնշման տակ կլինի:

Պատանի պիոներների կոլեկտիվներ կազմակերպելու վայրեր պիտի լինեն այն տեղերը, ուր ամենից լավ ապահովված է կոմունիստական ազդեցությունն ու կապը հասարակական կազմակերպությունների հետ: Քաղաքներում բանվորների յերեխաներին կազմակերպելու հիմնական վայրը պիտի լինին գործարանները, խառն կոլեկտիվները համար—արհեստակցական-բանվորական, կուսակցական ու կոմյերիտական ակումբները:

Ո՞Վ Ե ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԿՏԻՎՈՒՄ

Պատանի պիոներների կազմակերպությունը պիտի ընդգրկի ու համախմբի իր սոցիալական կազմով շատ ավելի լայն շրջաններ բան թե կուսակցությունն ու կոմյերիտմիությունը:

(Ռ. Կ. Կ. XIII համազ)

Պիոներական կոլեկտիվներին մեջ ընդունվում են աշխատավորների 10-ից մինչև 16 տարեկան հասակի յերեխաները: Առաջ ընդունվում ելին մինչև 14 տարեկանը:

ԼԿՅԵՄ 6-րդ համագումարն անհրաժեշտ համարեց պիոներներին շարքերում ընդունել մինչև 16 տարեկանը:

Կոմյերիտմիության մեջ մտնել կարող են 14 տարեկանից սկսած: Այդ նշանակում է, վոր պիոները, զեռ պիոներական կոլլեկտիվում աշխատելու ժամանակ կարող է կոմյերիտական դառնալ: Ինչո՞ւ պիտի այդպես անել:

«Ենպես ինչ ոգուտ է տալիս 14 տարեկանից ընդունելը: Դա հնարավորություն է տալիս կոմյերիտականներին ավելի մեծ կորիզ ունենալ պիոներական կոլլեկտիվներում: Յեթե մենք չըջորեն նպատակ ենք դնում մեր ազդեցությունը ընդգրկել պիոներական կոլլեկտիվը, մենք վոչ միայն ղեկավար պիտի ուղարկենք այնտեղ, այլ այնտեղ կոմյերիտականների մի ամուր կորիզ պիտի ունենանք»:

Նույնը և հոկտեմբերիկների նկատմամբ է: Հոկտեմբերիկ կարելի չէ լինել մինչև 11 տարեկան հասակը: Բայց 10 տարեկանից նա կարող է դառնալ պիոներ: զրա շնորհիվ էլ հոկտեմբերիկների մեջ կլինի պիոներական կորիզ:

ՌԿԿ XIII համագումարի գերեկտիվը միանգամայն պարզ է այստեղ. «պատանի պիոներների կազմակերպությունը պիտի համախմբի ու ընդգրկի իր կազմով շատ ավելի լայն սոցիալական շրջաններ, քան թե կուսակցությունն ու կոմյերիտմիությունը»:

«Պատանեկական շարժման բոլոր աշխատավորները — գրում է ընկ. Տարխանովը կուսակցության համագումարից անմիջապես հետո — իրենց համար լավ պիտի պարզեն այս հարցի թեորեաթիկ կողմը:

Միանգամայն պարզ է, վոր պատանեկական շարժումը խորհրդային հանրապետության մեջ, այսինքն այն հանրապետության մեջ, վորը գնում է դեպի սոցիալիզմ, դեպի անդամակարգ հասարակություն, վորը պիտի կառուցվի ու

ստեղծվի աշխատավորական լայն մասսաների ստեղծական ինքնագործնեությունից, պարզ է միանգամայն, վոր այդ հանրապետության մեջ պատ. շարժումը շատ ավելի լայն նպատակների յե հետապնդում, քան Արևմուտքի պատ. կոմ. շարժումը:

Արևմուտքում կուսակցությունն ու կոմյերիտմիությունը յերբ 1920 թվից սկսեցին պատանեկական խմբեր կազմակերպել, այդ որվանից մինչև այժմ էլ նրանց զրկավոր նպատակն է ապահովել պրոլետարական դավաններին բուրժուական ազգայնական ու կրոնական հետադիմական ու քայքայող ազդեցություններից:

Այնտեղ բանվոր դասակարգը յերեխաներին կոմունիստական խմբերի մեջ համախմբելով աշխատում է ապահովել իրեն, վոր այդ սերունդը կդնանույն ճանապարհով, վորով վոր գնում է ավագ հեղափոխական սերունդը (ավելի ճիշտ՝ նրա առաջավոր շերտերը):

Այսպիսով, այստեղ խոսք է լինում իրենց փոխարինողներ պատրաստելու մասին, այն մասին, վոր բանվորությունն աշխատում է թույլ չտալ վոչ իր գավակները կտրվեն իրենց դասակարգից: Կապիտալիստական յերկրների պայմաններում ավելին էլ ցանկանալ ու անել չեր կարելի:

Այլ կերպ է դրված հարցը մեզ մոտ՝ Խորհրդային Հանրապետություններում: Բացի այդ վերոհիշյալ խնդիրներից մեր առաջ մի ուրիշ հարց էլ է դրված. — վերամշակել ու պրոլետարական կաթսայի մեջ վերապատրաստել հանրապետության բնակչության բոլոր աշխատավոր տարրերը, վորոնք վարակված չեն կապիտալիստական հասարակության վերքերով և խոցերով: Իսկ հնարավոր դեպքերում, վերամշակել ու վերապատրաստել և այդ վերջիններին, յեթե նրանց հիվանդությունը բուժելի չէ:

Իշխանություն գլուխ անցած բանվոր դասակարգի դաս-

տիարակչական դերը հենց այն է, վոր նա, ոգտագործելով իր տիրապետողի ուժն ու հնարավորությունները՝ վերամշակում է մարդկային նյութի հսկայական կազմերը:

Այս բանը կարող է լինել բոլոր յերկրներում, ուր վոր բանվոր դասակարգը իշխանությունն իր ձեռքը կառնի:

Բանվոր դասակարգի դաստիարակչական խնդիրը, հենց այն է, վորպեսզի գյուղացիությունը կոոպերացման յենթարկի, այսինքն՝ իդեոլոգիապես վերամշակի, վերադաստիարակի բազմաթիվին վոչ բանվորական մասսաներին: Դրա համար ել մեզ համար պարզ պիտի լինի, վոր պատանեկական շարժումը հենց իր իդյալով (զաղափարով) պիտի համախմբի վոչ միայն բառացի կերպով բոլոր պրոլետարական զավակներին, այլ և համարյա բոլոր գյուղական յերեխաներին և քաղաքի բոլոր յերեխաներին:

Ի հարկե, դրանից չպիտի յեզրակացնել, թե պատանեկական շարժումն իր նպատակներն անմիջապես պիտի իրականացնի:

Ի հարկե, վոչ: Այստեղ մի ամբողջ շարք արգելքներ կան, վորոնք յերկար տարիների աշխատանքի ընթացքում միայն կարելի չե վերացնել: Բավական է, որինակի համար, հիշել, վոր դեկավարների անհրաժեշտ կադր չկա, կամ այն, վոր մեզ խորթ իդեոլոգիական ազդեցություններն տակ գտնվող յերեխաներին մենք ընդգիծանալ և ուղղել կարող ենք այն չափով, ինչ չափով ամուր կլինի հիմնական պրոլետարական կորիզը:

Այսպիսով ուրեմն՝ պիոներական կազմակերպություններն ավելի մասսայական կազմակերպությունն է, քան Ռ. Կ. Կ. և ԼԿՅԵՄ-ն.

ՈՐԵՆՔՆԵՐԸ, ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՆԸ-ՇՈՆՆԵՐԸ

Մեր պիոներական կոլեկտիվներն ունեն հատուկ արտաքին նշաններ և կանոններ: Նրանք ունեն իրենց նըշանը, որեենքները, սովորությունները, դրոշակը салют-ը, տարազը, բարեկու հատուկ ձևը և այլն: Բոլոր այդ արտաքին կոդները համապատասխանում են պատանեկական հասակի բնական պահանջներին և ոգնում են պիոներների կոմունիստական դաստիարակության գործին: Բայց մինչև այժմ դեռ կոմյերիտականներից շատերը չգիտեն պիոներների արտաքին նշանների հիմնական նշանակությունը: Յերբեմն այստեղ-այնտեղ կոմյերիտականների մեջ միտք է ծագում, թե «ավելորդ չէն պիոներների այդ նշանները, չի՞ կարելի արդյոք ձեռք քաշել դրանցից»: Ի հարկե այս կասկածները ծագում են այն պատճառով, վոր ճիշտ կերպով բացադրված չի լինում պիոներների արտաքին նշանների անհրաժեշտությունը: Առանձին պիոներական գրքերում այդ նշանների նշանակությունը շատ քիչ է բացատրված և այն ել այնքան ցրված ձևով, վոր այդ բացատրությունները դժվար է գտնել թե կոմյերիտականի և թե պիոներ-դեկավարի համար: Այնինչ, պատանեկական կազմակերպության մեջ հսկայական նշանակություն ունի արտաքին նշանների և հատուկ կանոնների գործածությունը:

Պատանեկական կազմակերպությունների այդ արտաքին նշանների ու ձևերի անհրաժեշտությունն ընդունել է դեռ ՌԿՅԵՄ 5-րդ համագումարը: Այդ համագումարի պատ. շարժման մասին կայացրած վորոշման մեջ նշանները թվելուց և նրանց նշանակության մասին խոսելուց հետո ասած է «Հարկավոր է ազդել յերեխաների վրա դասակարգային դաստիարակության միջոցով, հենվելով

նրանց բնական, հոգեբանական ու ֆիզեոլոգիական պահանջների վրա»:

Յերեխանները, յերեխաններ են: Նրանք մեծ հաճությամբ զարդարում են իրենց ժապավեններով, նշաններով, կամ ծածկում են յերեխայական թղթե գլխարկներ ու հագուստներ: Յերեխայական հասակում արտաքին եֆֆեկտը, ուժեղ տպավորությունը, շատ ուժեղ ազդեցություն է գործում յերեխանների վրա: Նա շարունակ կարիք ու ցանկություն է զգում փայլուն ու գունզգույն հագուստի: Պատանեկական կազմակերպությունների տարազները, յեթե արտաքին վորոշ նշաններ չունենան, յերեխանների համար անհետաքրքիր, տխուր ու անգրավիչ կլինեն և դրա հետևանքը կլինի աչքի, վոր յերեխան շատ պաղարյուն կվերաբերվի իր գործին, աշխատանքն ու կազմակերպությունը չի հետաքրքրի նրան:

Բուրժուական պատանեկական կազմակերպությունները — սկսած սկսած ու ֆաշիստական կազմակերպությունները, հաշվի առնելով պատանեկական հասակի առանձնահատկությունները հատկապես շատ ուշադրություն են դարձրել (և այժմ ել շարունակում են նույն անել) արտաքին ձևականություններին: Նրանք վարպետորեն հիպնոզացնում են պատանիների մասսաներին իրենց փայլուն տարազով, աչքի բնկելու առթիվ տված նշաններով, աստիճաններով, որդեններով, զինվորական խաղերով, մասսայական դիպրիզներով, յելույթներով, յերթերով և այլն:

Զգացումների արտաքին արտահայտությունների պահանջը շատ զորեղ է ու որինական: Հին բուրժուական, ստրկական ու կրոնական խորհրդանշանների դեմ հաջողությունը պայքարելու նրպատակով՝ այդ խորհրդանշանները բնագոյատևումն զուգընթաց պետք է վորպես հակադրություն ստեղծվեն և հեղափոխական խորհրդանշաններ:

Յեվ խորհրդային պետության հեղափոխական խորհրդանշաններն արդեն ստեղծվում ե: Նա նոր է, պարզ ու հզոր: Կարմիր դրոշը, մուրճ ու մանգաղը, կարմիր աստղը, բանվորն ու գյուղացին, ընկերը, ինտերնացիոնալ — ահա սրանք են մեր նոր հեղափոխական խորհրդանշանները: Հեղափոխական դաստիարակություն տալու նպատակով Կարմիր բանակում ընդունված է «Կարմիր աստղի» նշանը, կոմյերիտականների համար «Կիմ»-ը, «Մուր» ի նշանները և այլն:

Հեղափոխական խորհրդանշանները շատ են դուր գալիս յերեխաններին և հարկավոր է ամեն կերպ ոգտագործել դեպի խորհրդանշաններն ունեցած յերեխանների սերը՝ նրանց հեղափոխական դաստիարակություն տալու նպատակով: Պիոներական կազմակերպության մեջ ամեն ինչ, թեկուզ ամենաաննշան բանը պետք է դաստիարակի յերեխաններին ու հեղափոխական վորդի առաջացնի նրանց մեջ:

Ահա այս ընդհանուր հիմնավորումներն են, վոր անհրաժեշտ են դարձնում պատանի պիոներների արտաքին նշանները, նրանց հատկանիշները:

Այժմ անցնենք առանձին առանձին, ամեն մի նշանի ելույթյան ու նշանակության բնության:

Պիոների նշանը. — Այդ նշանը կազմված է կարմիր դրոշից, մուրճ ու մանգաղից, հինգ գերանից կազմած խալուկից — «Միշտ պատրաստ» մակագրությամբ: Կարմիր դրոշը — դա աշխատավորության հաղթանակի համար մղվող պայքարի խորհրդանշանն է. խորհրդանշանը այն բանի, վոր առանց զոհերի ու դժվարությունների անկարելի յե անցնել դեպի կոմունիզմ տանող ուղին: Կարմիր դրոշը պիտի հիշեցնի պիոներին, վոր խՍՀՄ-ի շինարարության ազատությունը ձեռք է բերված ավագ սերունդի կարմիր

արյունով: Մուրճ ու մանգաղը ասում ե, վոր պատանեկական կոմունիստական շարժումը առաջին հերթին բանվորների ու գյուղացիների յերեխաների շարժումն է, վոր պիտոներեն աշխատանքը աշխատանքային բնույթ է կրում և սերտորեն կապված է հասակավորների աշխատանքին և վոր առանց աշխատանքի կոմունիզմ ստեղծել չի կարելի: Հինգ գերաններից կազմած խարուկը, վոր յերեք հրաբորբոք լեզու ունի, ասում ե, վոր պատանեկական կոմունիստական խմբերը իրենց շարքերում համախմբում են հինգ աշխարհամասերի պրոլետարների զավակներին—III կոմունիստական ինտերնացիոնալի դրոշի տակ: Նա հասկացնում ե, վոր բոլոր պիտոներեն յեղբայրական կապով պիտի կապվեն իրար հետ, վորովհետև վառվող խարուկը գիշերը իր պայծառ բոցերով իր կողմն ե գրավում բոլորին: Վառվող խարուկը, վոր իր լույսով ցրում ե խավորը, պիտի հիշեցնի պիտոներին, վոր պետք ե ձգտի դեպի լույս, դեպի գիտութիւն, վորովհետև առանց գիտութեան չի ստեղծվի կոմունիստական հասարակութիւնը: Մանգաղի վրա գրված «միշտ պատրաստ» մակագրութիւնն ասում ե, վոր պիտոները միշտ ու ամեն տեղ պիտի պատրաստ լինի պայքարելու բանվոր դասակարգի գործի, կոմունիզմի շինարարութեան համար: Պիտոները նշան կրելու իրավունք ունի միայն $1\frac{1}{2}$ —2 ամիս կոլեկտիվում լինելուց հետո, յերբ կապացուցի, վոր աշխատում ե լինել իսկական պիտոներ և յերբ հանդիսավոր պիտոներական խոստում կտա, վոր հավատարիմ ե լինելու բանվոր դասակարգին՝ կոմունիզմի համար պայքարելու ընթացքում:

Նշանը տրվում ե պիտոներին վոչ թե վորպես վարձատրութեան, վոչ թե «բարեգործութեան» կամ նրա ինքնասիրութեան համար, այլ վորպես մի խորհրդանշան աչն բանի, վոր նա պատկանում ե վորոշ կազմակերպութեան,

վորի մեջ նա մտել ե կախավոր կերպով: Այդ նշանը կարևոր ե նաև նրա համար, վոր նա միաժամանակ պատկերացնում ե ամբողջ պիտոներական կոլեկտիվի և՛ նպատակը և՛ գործունեութիւնը և՛ պատանեկական կոմունիստական շարժման ամբողջ ելութիւնը: Նշանը ամրապնդում ե կազմակերպութեան ու նրա անդամների կապը, ուժեղացնում ե պիտոների պատասխանատվութիւնն իր վարձումների համար ե ստիպում ե պիտոներին ամեն տեղ դուրս գալ ու գործել վորպես վորոշ կազմակերպութեան ներկայացուցիչ: Պիտոներական կազմակերպութեան պատկանելու նշանը պիտոների գործունեութիւնը դնում ե հասարակական պրոլետարական վերահսկողութեան տակ: Աչն ամենը, վոր անում ե պիտոները, չի տնուկ ձեռի համար կամ մարդկանց ցույց տալու նպատակով, վորովհետև նա կարելիք չի գտնում իր վարձումքն ու արածը ծածկել: Նրա բոլոր գործերն ու կատարածները պիտի պարզ ու բաց լինեն: Դա շատ մեծ հասարակական, դաստիարակչական նշանակութիւն ունի: Յուրաքանչյուր նշան ուժեղացնում ե ինքնագիտակցութիւնը ե յերեխաների մեջ յեռանդուն ե գործունեութեան ձգտում ե առաջացնում: Նա ոգնում ե պիտոներ-կոլեկտիվների մեջ հաստատուն հեղափոխական սովորութեան ստեղծելու գործին: Միասնական նշանը պիտոներներին դաստիարակում ե պրոլետարական համեմատութեամբ:

Որեմներն ու սովորութիւնները — Հինգ որենքների ու հինգ սովորութիւնների մեջ ձևակերպված են պիտոների վարքի վորոշ կանոնները, նրա գործունեութեան սեղմ ծրագիրը:

Մեր պատանեկական կոմունիստական խմբերում յերեխաների առաջ մի շատ գրավիչ ու հսկայական նպատակ, աչն և՛ գնալ փոխարինելու կոմյերիտմութեանը,

կառուցել կոմմունիզմը: Բայց միայն գործի անհրաժեշտությունն ընդունելը բավական չէ, գրված նպատակին հասնելու համար հարկավոր է մի շարք միջոցներ ձեռք առնել: Այստեղից բխում է այն, վոր պատանեկական կոմունիստական խմբերի անդամներն իրենց վրա պարտականություն են վերցնում միանգամայն վորոշակի վարք ունենալ ինչպես դպրոցում, այնպես էլ տանն ու փողոցում:

«Ամենակարևորը, անչափահասի համար հոգեբանորեն հսկայական նշանակություն ունեցողն այն է, — ասում է Ն. Կ. Կրուպսկայան, — վոր վորոշ իդյալ հրապարակելուց հետո հարկավոր են միանգամայն վորոշակի ու կոնկրետ վարքի կանոններ, վորոնք բղխում են տվյալ իդյալն ընդունելուց: Ահա հենց այդ իդեալի ու գործնական վարքի կապի մեջ հսկայական ուժ կա»:

Վարքի կանոնների նշանակությունն առանձնապես պարզ ընդգծել է ընկ. Բուխարինը ՌԿՅՅՄ-ի 5-րդ համագումարին արտասանած իր ճառի մեջ: Նա ասում է, վոր մեզ հարկավոր չեն հասարակական վարքի ձևերը, վորոնք հայտնի չեն, թե վորտեղից են վերցվում և վորոնք վոչ վոր չի կարող բացատրել: Մենք չպետք է կուրորեն յենթարկվինք ինչ վոր անհայտ հեղինակություն, բայց — ասում է ընկ. Բուխարինը «Յեթե մենք ցանկանում ենք սոցիալիզմի հասնել, ապա դրա համար մենք պետք է կարգավորենք վորոշ գործողություններ, չձեռնարկենք ուրիշ գործողություններ»: «Դրա համար էլ, — ասում է ընկ. Բուխարինը, բնական է, վոր բանվոր յերիտասարդները պիտի ունենան վարքի վորոշված կանոններ: Յեթե չլինեն այդ կանոններն ու նորմաները, ապա վոչինչ էլ չի լինի»: Այնուհետև նա նկատում է, վոր «Կանոններ պիտի ունենան մանավանդ չկազմակերպված անհատները»

(այսինքն — յերիտասարդներն ու յերեխաները): «Այդ կանոնների նշանակությունն ավելի պիտի մեծանա, յերբ մենք շրջապատված ենք թշնամիներով» Ըստ ընկ. Բուխարինի, կանոնները նրանք են, վոր կապում ու համախմբում են, հնարավորություն են տալիս պահպանել ներքին միաձուլության և լինել հարվածային յերկաթի մի բոլոնցը:

Բացի այդ, ընկ. Բուխարինը մատնանշում է, վոր «պատերին կախված այն լողունգները, վորոնք իրենց մեջ պարունակում են մեր վարքի, մեր ընթացքի կանոնները, մեր ուխտն ու նպատակները, շատ լավ ու անհրաժեշտ բաներ են, վորովհետև նրանք շարունակ հիշեցնում են մեզ ու շարունակ ասում, թե ինչ պիտի անենք, ինչ պիտի հիշենք. Յեթե մենք ձևակերպված կանոններ ունենանք, մեր աշխատանքն ավելի հետաքրքիր կլինի: Մեր որդանիզմի բոլոր հիմնական մասերն ավելի յեռանդուն լինենագործունեություն կունենան, ավելի գիտակցական վերաբերմունք կլինի գործին»:

Այս քաղվածքները պարզ ու վորոշ ասում են, վոր անհրաժեշտ ու ոգտակար են պիոներական որենքները:

Արդյոք կարելի չէ պիոներական որենքները կանոնադրություն համարել:

Վոչ, դա ճիշտ չէր լինի, վորովհետև սովորաբար կանոնադրության մեջ խոսվում է կազմակերպչական կառուցվածքի մասին: Պիոներական որենքներն ու սովորություններն ավելի շուտ յուրահատուկ «պիոներական որենսգիրք» է, վոր խոսում է այն մասին, թե պիոներն ինչ պիտի անի ինչ չպիտի անի:

Պիոներական որենքների բացատրությունը միշտ կապվում է պիոների ամենօրյա աշխատանքների հետ: Նրանց իրականացմանը հետևում են հենց իրենք, պիո-

ներները՝ ամբողջ կողեկտիվով և պիտի նկատել, վոր ներառեք մեծ մասամբ պահում են իրենց որենքներն անխախտ ու շատ հոգատար կերպով: Իհարկե, խորհուրդ չենք տալիս որենքները «բերանացի» անել ու դրանով ել բավականանալ:

Հանդիսավոր խոսումը. — Հանդիսավոր խոստումը պիտի նախապես կերպով կողեկտիվի մեջ ընդունեն եւ: Հանդիսավոր պայմաններում, դրոշի, կողեկտիվի ու կոմյերիտականների առաջ պիտի նախապես խոստում եւ տալիս, վոր ինքը «պատանի պիտի ելն իմ ՍՄԻ-ի, իր ընկերների առաջ հանդիսավոր կերպով խոստանում եւ, վոր 1) նա հաստատապես բանվոր դասակարգի, կողմը կըլինի ամբողջ աշխարհի բանվորների ու գյուղացիների ազատագրության համար մղվող պայքարում, 2) ագնիտներն ու անշեղ կերպով պիտի կատարի պատանի պիտիներների որենքներն ու սովորութիւնները և ինչի պատգամները»: Սրանից հետո միայն պիտի նշան եւ ստանում և իրավունք եւ ստանում կրելու այդ նշանը: Հանդիսավոր խոստումը կապում եւ պիտիներին և վորոշ ուղղութիւն եւ տալիս նրա գործին: Այստեղ ևս նկատի չեւ առնված նրա տարիքի հոգեբանական առանձնահատկութիւնը՝ մանավանդ արտաքին տպավորութիւնն ու ձեռք ազդեցութիւնը:

Փորձը ցույց եւ տվել, վոր հանդիսավոր խոստում տալու մոմենտը խոր տպավորութիւն եւ գործում չերեխալի հոգում և ազդում են նրա հետագա աշխատանքների վրա: Այստեղ պետք եւ ասել, վոր պիտիները միանգամից լիակատար իրավունքներով պիտի չի դառնում, միանգամից հանդիսավոր խոստում չի տալիս ու նշան ստանում, այլ միայն այն ժամանակ, յերբ նա կողեկտիվ մտնելուց հետո 1¹/₂ — 2 ամսվա ընթացքում իր ակտիվութիւնը ցույց կտա պիտիներական ընդհանուր աշխատանքի մեջ և կապա-

ցույցի իր լիակատար նվիրվածութիւնը պիտի ներկայանա գործին: Դա կարծես խորհրդանշան եւ այն բանի, վոր հարկավոր եւ աշխատել ու արժանի լինել: Բոլորովին կազմակերպութիւն շարքերը մտնելու համար նախապատրաստվելն արդեն վորոշ նվաճում եւ, ուժերի վորոշ չափի լարում, վորն առանձնապես կարևոր եւ մանկական հասակի համար: Հանդիսավոր խոստում տալու մոմենտը համարյա միշտ եւ մի տարվա պիտիներական աշխատանքների վերջն եւ գցվում:

Նշանաբանը. — Պիտիներների նշանաբանը նրան վողջունելու ձևն եւ «Պատրաստ, պայքարելու բանվորական գործի համար» և պատասխանը՝ «Միշտ պատրաստ»: Դա ևս պարտականութիւններից մեկն եւ, վորն ամրապնդում եւ պիտիներական կազմակերպութիւնն ամբողջ կողեկտիվը:

Նշանաբանը շարունակ հիշեցնում եւ պիտիներին, վոր հարկավոր եւ միշտ զգաստ ու պատրաստ լինել, վոր մի րոպե ժամանակ չկորցնել և ամեն քայլափոխում հիշեցնում եւ, թե ինչի յեւ ձգտում պիտիները: Բացի այդ «միշտ պատրաստ» լինելու պարտականութիւնը իդիոլոգիապես կաշուն ու կազմակերպված լինելը վերջին հաշվով պիտիներական կողեկտիվի հաստատուն հսկողութիւն եւ ստեղծում ամբողջ կենցաղի, իդիոլոգիական վարքի բովանդակութիւն վրա և վոր առանձնապես կարևոր եւ ֆիզիքապես զարգացող յերեխաների նոր սկիզբ առնող սեռային արտահայտութիւնների վրա:

Սալյուս (պատիվ). — Սալյուտը դա վողջունն եւ, վոր տրվում եւ աջ ձեռքով՝ պիտիների հանդիպելիս: Սալյուտ տրվում եւ նաեւ հանդիսավոր խոստման ժամանակ և յերբեմն եւ «ինտերնացիոնալ» յերգելու միջոցին: Սալյուտ տրվում եւ հետևյալ ձևով. աջ ձեռքի հինգ մատները, բիփ

բացած իրար հետ, ձեռք դեպի ձախ բարձրացվում է գլխի բարձրությամբ, ճակատի ուղիղ մեջ տեղը:

Սալյուտի խորհրդանշանը հինգ մատ ցույց է տալիս հինգ աշխարհամասերը, վորտեղ կան ճնշվածներ, վորոնց համար ել պայքարում են պիոներները:

Գլխի բարձրությամբ բարձրացրած ձեռքը նշանակում է, վոր պիոներների համար հասարակության շահերը բարձր են սեփական անհատական շահերից: Ամուր բազուկ ու լուսավոր գլուխ — դա նրանք են, վորոնցով աշխատում է պիոները: Պիոներական սալյուտը ամենեկին ել այնպիսի պատվասում չէ, վոր կար հին բանակում, չերբ զինվորները իրենց մեծավորներին «պատիվ» եյին բռնում: Պիոներական սալյուտը յերեխայի արտաքին արտահայտություններից. ամենակարևորներից մեկն է, վոր ցույց է տալիս, թե այդ յերեխան պիոներական կազմակերպության մեջ է: Սալյուտը հիմնված է յերեխայի բնական պահանջի վրա, վորպես զգացմունքի արտաքին արտահայտություն:

Տարագ (форма). — Պիոներները միատեսակ տարագով շոր են հագնում. ամուր վերնաշապիկ և կարճ վարդիկ սղանները և մինչև ծնկները հասնող շրջագգեսա — աղջիկները: Սովորաբար փերնաշապիկը լինում է կանաչավուն գույնի իսկ վարտիկներն ու շրջագգեսաները մուգ գույնի (ընտրված են գործնական ու չխուճացող գույներ): Բացի այդ, բոլոր պիոներները կրում են կարմիր թաշկինակ, վորպես վզկապ: Պիոների տարագը նշան է, վոր նա պատկանում է պիոներական կազմակերպությանը: Բացի այդ, պիոներական տարագը շատ գործնական է, հարմար ու առողջապահական և պիոների առջնությունն ամրապնդելու տեսակետից նպատակահարմար. գույցե և հենց դա յե նրա ամենագլխավոր արժեքը: Պիոներական տարագը ձեռնըտու յե նաև նրանով, վոր նրա համար ավելի քիչ կտոր

է գնում քան թե սովորական հագուստին: Պիոներական տարագը ոգնում է պիոներների դիսցիպլինացմանը: Ցույցերի ու յերթերի ժամանակ պիոներական տարագը ոգնում է նրանց մեջ կարգապահություն հաստատելու գործին: Պիոներական տարագը ևս պատանեկական հասակի առանձնահատկություններից է բղխում:

Վզկապ. — Վզկապ կրելու իրավունք է տրվում միայն հանգիսավոր խոստումը տալուց հետո: Վզկապը հիշեցնում է պիոներին իր տված հանգիսավոր խոստումը: Յերբ պիոները փողկապը կապում է, նա պիտի հիշի, վոր այդ փողկապը տրված է իրեն հանգիսավոր խոստման ժամանակ:

Վզկապի կարմիր գույնը հեղափոխության սիմվոլ է: Վզկապի յերեք անկյունը պիոներների հետևյալ լոզունգըն են նշանակում — «փոխարինողների փոխարինողներն են գալիս» (պիոներները գնում են փոխարինելու կոմյերիտիությունը, կոմյերիտիությունն էլ փոխարինողներ է պատրաստում կոմկուսակցության համար): Կուսակցությունը, կոմյերիտիությունը պիոներները — յերեք անկյուն են: Վզկապը պիոներին պետք կգա նաև կյանքում ձեռքը ուռչելու, կամ վիրավորելու դեպքում կապելու համար, նշանախոսի համար (սիգնալ) և այլն:

Կոլեկտիվի անունը. — Յերեխաների խմբին աշխատավորության շահերի համար պայքարող մարտիկի գաղափար տալու համար, ամեն մի կոլեկտիվ իրեն անուն է ընտրում հեղափոխական գործիչների, գաղափարական առաջնորդների վորևե մեկի անունը կամ հեղափոխական աշխատանքային վորևե դեպք: Այդ բանն ընդունել է դեռ ՌԿՅՍՄ 5-րդ համագումարը:

Հեղափոխական գործիչների անուն կրելը կոլեկտիվի համար խոշոր իմաստ ունի, վորը ինքնապատասխան

նաաւփություն ե զնում պիտների վրա և զրդում ե նրան սովորել հեղափոխության պատմությունը: Յուրաքանչյուր պիտներ պարտավորվում ե շատ լավ ու հիմնովին ուսումնասիրել իր առաջնորդի կշանքը և անշեղ կերպով հետևել նրա որինակին:

Ողակի անունը.—Նույն նպատակներով ել ողակն ե իր համար անուն ընտրում, յեղած աշխատախբային սիմվոլներին (գարբին, մաճկալ, անաստված, սավսոնակ, մանգաղ): Այդպիսով ողակը պարտավորվում ե ուսումնասիրել զրանց գործածության հետ:

Ողակի դրուակն ու կոլեկտիվի դրուը.—Ողակն ունենում ե զրոշակ, վորի վրա մի կողմից պատկերացնում ե իր հեղափոխական-աշխատանքային սիմվոլը, իսկ մյուս կողմում գրված ե լինում (№ կոլեկտիվի «սավառնակ» ողակ): Կոլեկտիվն ունի իր զրոշը մի կողմից նկարված պիտներական նշանը, ընտրանն ու լոգունգը, իսկ մյուս կողմում կոլեկտիվի №-ը, այն հիմնարկության անունը, վորին կից ե այդ կոլեկտիվը: Ողակի զրոշակը ողակի համար մի յուրահատուկ նշան ե: Սովորաբար այդ գրոշակը գարգարում ե ողակի աշխատավայրը և ամեն անգամ ողակը դուրս ե գալիս վերցնում ե իր հետ: Կոլեկտիվի զրոշը ամբողջ կոլեկտիվի սիմվոլն ե: Այդ զրոշը դուրս ե բերվում հատուկ հանդիսավոր ուրերին, ամբողջ կոլեկտիվի դուրս գալու դեպքում, զրոշներն անհրաժեշտ են նրա համար, վորպեսզի նրանց միջոցով ավելի սերտ համախմբվեն պիտներները ողակներում կամ կոլեկտիվներում:

Այս ե ընդհանուր գծերով պիտներական արտաքին նշանների նշանակությունը: Պատանեկական կազմակերպությունների մեջ փոքրիկ բաները շատ մեծ հեղափոխական-դաստիարակչական նշանակություն ունեն:

ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՊԱՏԱՆԵԿ, ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԼԵՆԻՆԻ

ԱՆՎԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ա.

Աճող սերունդի կոմունիստական դաստիարակության և նրանից հետագայում կոմունիստական հասարակարգի մարտիկներ ու կուռցողներ պատրաստելու նպատակով, կոմյերիտմիությունը, կոմկուսի ղեկավարությամբ ստեղծում ե պատանի պիտներին Ր. Լենինի անվան պատանեկական կոմունիստական կազմակերպություն: Պրոֆմիությունները և լուսժողկոմի մարմինները, վորպես անմիջապես շահագրգռված կազմակերպություններ, մասնակցում են այդ աշխատանքում և աջակցում են կոմյերիտմիությանը, չլստեղծելով իրենց կից հատուկ պատանեկական կազմակերպություններ:

Բ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ, ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ՁԵՎ ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Պատանի պիտներին կազմակերպության մեջ ընդունվում են աշխատավորների և առաջին հերթին բանվոր-

ների և գյուղացիների 8—16 տարեկան հասակ ունեցող յերեխաները:

2. Նոր պիոներների ընդունելութունը կատարվում է կոլեկտիվի խորհրդի միջոցով և վերջնականապես հաստատվում կոլեկտիվի ընդհանուր ժողովի կողմից:

3. Վոչ պակաս յերկու ամսից հետո պիոներական որենքները, սովորութունները իմացող նորեկը տալիս է հանդիսավոր յերդում և ստանում է պիոներական նշան:

4. Պիոների արտաքսումը կատարվում է ողակի, կոլեկտիվի խորհրդի վորոշմամբ, կոլեկտիվի ընդհանուր ժողովի հաստատումից հետո, պիոներական որենքների սովորութունների խախտման և կարգապահությանը չըյենթարկվելու համար:

II ՏԵՐՄԻՆԱԼՈՒԳԻԱ

1. Խորհրդային Միության բոլոր պատանեկական կազմակերպութունները կոչվում են «պատանի պիոներների Ը. Լենինի անվան պատանեկական կոմունիստական կազմակերպություն»:

2. Կազմակերպության սկզբնական բջիջը կոչվում է «կոլեկտիվ»:

3. Կոլեկտիվը բաժանվում է 10 հոգուց բաղկացած խմբերի, վորոնք կոչվում են «ողակ»:

4. Կոլեկտիվի ղեկավարը կոչվում է «կոլվար»:

5. Ողակի ղեկավարը՝ «ողակավար»:

III ԿՈԼԼԵԿՏԻՎ

1. Պատանի պիոներների կազմակերպության սկզբնական բջիջը—կոլեկտիվը կազմակերպվում է արդյունաբերական ձեռնարկին կից, ախումբում, մանկատանը և գյուղում՝ Լ. Կ Յե. Մ. բջիջին կից:

2. Կոլեկտիվը պետք է ընդգրկի 40-ից—50 յերեխա՝ ձուլված, շարժուն և ճկուն միավոր լինելու համար: Տըվյալ հիմնարկության կից մեծ թվով յերեխաներ ընդգրկելու համար, կազմակերպվում են ուրիշ կոլեկտիվներ, վորոնք ունեն մի ընդհանուր խորհուրդ բաղկացած բոլոր կոլվարներից և մեկ ընդհանուր ղեկավարից: Վերջինը պատասխանատու յե բոլոր կոլեկտիվների աշխատանքների համար:

3. Կոլեկտիվի աշխատանքները ղեկավարելու համար, կոմյերիտմիության համապատասխան բջիջը նշանակում է կոմյերիտականներից կոլվար, վորը հաստատվում է կոմյեր. միութ. կոմիտեյի կողմից:

4. Կոլվարին ոգնելու համար կոմյերիտմիության բջիջը նշանակում է ոգնական, վորը հաստատվում է դարձյալ կոմյերիտմիության կոմիտեյի կողմից:

5. Կոլեկտիվը ղեկավարվում է կոլեկտիվի խորհրդի կողմից, վորի մեջ մտնում են ողակավարները, կոլվարը, նրանց ոգնականները, կոմյերիտմիության բջիջի բյուրոյի ներկայացուցիչը, ըստ հնարավորության կուսակցության անդամ: Կոլեկտիվի խորհուրդը տանում է կոլեկտիվի աւորյա աշխատանքները, վարում է պիոներների ընդունելության և արտաքսման գործը, հետևում է կոլեկտիվի ներքին կարգապահությանը, յտում է համապատասխան ֆորպոստի գեկուցում և ղեկավարում է նրա աշխատանքը, քննում և հաստատում է կոլեկտիվի աշխատանքների ծրագրերները, վորոնց գործադրութունը բաշխում է ըստ ողակների, միաժամանակ հանդիսանալով ողակավարներ պատրաստող դպրոց:

6. Կոլեկտիվի Խորհուրդը ընտրում է քարտուղար, վորը տանում է խորհրդի ժողովների արձանագրութունները, կոլեկտիվի որագիրը և խորհրդի կողմից հանձնա-

բարած այլ աշխատանքներ, խորհրդի ժողովները վարում է հերթական նախագահ:

3. Բացի այդ կուլեկտիվները ընտրում են տնտեսական, խմբագրական, գրադարան-ընթերցարանի և ուրիշ պարբերաբար վերընտրվող հանձնաժողովներ, վորոնք դարձյալ ղեկավարվում են խորհրդի կողմից նրա անդամների գլխավորությամբ:

8. Յուրաքանչյուր կուլեկտիվ կրում է հեղափոխական նշանավոր դեպքերի և ղեկավարների անուն, որինակ. «Փարիզյան կոմունա», «Հոկտեմբերյան հեղափոխություն», «Մայիս 1»-ը «Ռիկովի», և այլն:

9. Կուլեկտիվը պարբերաբար գումարում է ընդհանուր հավաքություններ զանազան զրույցների, աշխատանքների, եկակուրսիաների համար, նույնպես ընթացիկ կյանքի կարևոր խնդիրները քննության առնելու. որինակ խորհրդի հաշվետու զեկուցումը, աշխատանքը դպրոցում, մասնակցություն տոներին, կամպանյաններին, պիոներների ընդունելության և արտաքսման կուլեկտիվի խորհրդի վորոշումները հաստատումը:

IV ՈՂԱԿ

1. Յերեսխաներին ընտրելու ըստ մտերմության, հասակի, միաբան աշխատանքի հատկությունների նրանց կուլեկտիվ աշխատանքներին և կարգապահությանը ընտելացնելու, աշխատանքը խմբակային մրցումներով տանելու և ղեկավարությունը դյուրացնելու նպատակով, կուլեկտիվը բաժանվում է 10-ական պիոներներից բաղկացած ողակների:

2. Ողակը իր պիոներներից բառում է ողակավար և ոգնական, վորոնք վերընտրվում են 3 ամիսը մեկ անգամ,

3. Ողակը չորացնում է հեղափոխական աշխատանքա-

յին միաք կրող կամ հեղափոխական ղեկավարի անունը (Լենին, Ռիկով, Կալինին, Ստալին, Տրոցկի, Լուսաշարսկի, կարմիր ողաշու, կարմիր մեքենավար, մուրճ, մանգաղ և այլն):

4. Ողակում տարվում են առորյա կանկրետ աշխատանքներ, զրույցներ, ֆիզկուլտուրայի պարապմունքներ, աշխատանք արհեստանոցում, նախապատրաստություն բանակատեղիի, խաղեր, հասարակական և քաղաքական աշխատանքներ, պատրաստվում է նյութեր ամսագրին, լրագրին:

Ողակներում ամբողջ աշխատանքը տարվում է կուլվարի, նրա ոգնականի հսկողության տակ, վորոնք ողակավարների միջոցով անց են կացնում կուլեկտիվի խորհրդի վորոշումները և տալիս են իրենց ցուցմունքները:

V. ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐ

1. 8—11 տարեկան հասակ ունեցող յերեսխաներն առանձնացվում են հոկտեմբերիկների խմբակների մեջ:

2. Հոկտեմբերիկների խմբակը ունենալու չե 25 հոգուց վոչ ավել:

3. Խմբակը բաժանվում է 5 ողակի 5-ական հոգուց բաղկացած:

4. Հոկտեմբերիկների խմբակը ղեկավարում է կուլվարի ոգնականը:

5. Ողակը ղեկավարում է առանձնացված Հոկտեմբերիկը:

6. Հոկտեմբերիկները պիոներական նշան չեն կրում, բայց ունեն վզկապ:

VI. ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ, ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶ-
ՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԳԱՎ.
ԲՅՈՒՐՈՒ

1. Շրջանային, քաղաքային, գավառային, մասշտաբով Պատանի պիոներների կոլեկտիվները միանում են շրջանային, քաղաքային, գավառային կազմակերպության մեջ լենկոմյերիտմիության համապատասխան կազմակերպության կից, լենկոմյերիտմիության համապատասխան կոմիտեյի ղեկավարությամբ:

2. Պիոներական կոլեկտիվը գործնականորեն ղեկավարելու համար՝ համապատասխան շրջաններում, լենկոմյերիտմիության տեղական կոմիտեն իրեն կից ստեղծում է պիոներական կազմակերպության գործնական ղեկավարող մարմին (շրջանային, գավառային պիոներական բյուրո) կոմիտեյի բաժնի հավասարազոր իրավունքներով:

Պատանի պիոներների բյուրոն, լենկոմյերիտմիության կոմիտեյի մի մասն է. ոգտվում է նրա ապարատից, չունի իր առանձին կնիքը, բլանկ, և այլն: Պատանի պիոներների բյուրոն աշխատում է լենկոմյերիտմիության կոմիտեյի ցուցմունքներով ու ղեկավարությամբ: Աշխատանքի բոլոր կարևոր խնդիրները հատատվում են կոմիտեյի կողմից:

3. Բյուրոյի խնդիրներն են՝ կոլվարների հրահանգումը ու ղեկավարումը, կազմակերպչական և մեթոդիկ խնդիրների մշակումը, չեքխանների մասնակցությամբ կամպանյանների և տոների կազմակերպումը, դպրոցում և մանկատնում պիոներների աշխատանքների ղեկավարումը, պիոներական կոնֆերանսների, խորհրդակցությունների գումարումը ծնողների, մանկավարժների, գործարանային կոմիտեների, գյուղխորհուրդների և հասարակական այլ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցու-

թյամբ պիոներական զանազան հանձնաժողովներ ղեկավարումը: Գավառային, շրջանային բյուրոները պարբերաբար գումարում են իրենց նիստերը կոլվարների հետ միասին:

4. պիոներական բյուրոյի կազմը պետք է լինի 5—7 հոգի: Աշխատանքների միայուն գործնական ղեկավարության համար լենկոմյերիտմիության կոմիտեն իր անդամներին մեկին նշանակում է բյուրոյի նախագահ, վորը պետք է լինի կոմկուսի անդամ: Բացի այդ բյուրոյի մեջ մտնում են կուսակցության կոմիտեյի, Պրոֆմիության, Լուսբաժնի, աշխատավորուհու բաժնի ներկայացուցիչները, և անհատապես ընտրված գործնական պիոներական աշխատողները: Շրջանային, գավառային և կամ քաղաքային մասշտաբով (համապատասխան բյուրոյին կից) պարբերաբար գումարվում է ողակավարների խորհրդակցություններ շրջանային, գավառային աշխատանքի խնդիրները լուծելու համար: Այդ խորհրդակցություններում պիոներներից կազմված են ֆոնդային անաշխատանքների մեջ աշխատող, պատի լրագրների հրատարակման, պիկորական և այլ հանձնաժողովներ վորոնք աշխատում են բյուրոյի անմիջական ղեկավարությամբ:

VII ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՆԱՀ. ԲՅՈՒՐՈՆԵՐԸ

1. Տվյալ նահանգում գտնվող պատանի պիոներների բոլոր գավառային, շրջանային կազմակերպությունները համախմբվում են պատանի պիոներների Լենինի անվան նահանգային կազմակերպության մեջ:

2. Կոմյերիտմիության գավառային, շրջանային կոմիտեների աշխատանքը ղեկավարելու համար Ռ. Լ. Կ. Յե. Մ. նահ. կոմիտեն ստեղծում է իրեն կից մինչև 11 հո-

գուց բաղկացած. պատանի պիոներները բյուրո: Բյուրոն հանդիսանում է Նահանգկոմի բաժինը և աշխատում է նրա անմիջական ղեկավարութեամբ:

3. Բյուրոյի գլխին է կանգնած նախագահը՝ կոմյերիտմիության նահանգկոմի անդամ: Բյուրոյի մեջ մտնում են կուսակցության Նահանգոմի, Լուսբաժնի, Պրոֆմիության նահանգային խորհրդի, Առբաժնի, Աշխատավորուհու բաժնի ներկայացուցիչները և Նահանգկոմի կողմից հաստատված գործնական աշխատողները:

4. Նահանգ. Բյուրոն մեթոդիկ խնդիրները մշակելու համար, ստեղծում է իրեն կից մեթոդական հանձնաժողով, հրավիրելով մանկավարժ կոմունիստներին:

5. Նահանգ. բյուրոն տեխնիկական տպարատ չունի, սղովում է նահանգկոմի տպարատից:

6. Նույնպիսի բյուրոներ կազմակերպվում են ազգային և շրջանային (Область) մասշտաբով:

7. Ռ. Լ. Կ. Յե. Մ. յերկրային կոմիտեներին կից ստեղծվում են պատանի պիոներների յերկրային բյուրոներ բաղկացած՝ նախագահից, վորը Ռ. Լ. Կ. Յե. Մ. յերկրային կոմիտեյի անդամ է, ներկայացուցիչներից՝ Ռ. Կ. Կ. յերկրային կոմիտեյի, պրոֆմիության յերկրային բյուրոյի, կին բաժնի, առբաժնի, տվյալ նահանգի պատ. պիոներներին նահանգ. բյուրոյի նախագահից, և անհատորեն ընտրված պիոներական գործնական աշխատողներից: Պիոներական յերկրային բյուրոն անմիջականորեն ղեկավարում է Ռ. Լ. Կ. Յե. Մ. յերկրային կոմիտեյի բյուրոյի կողմից:

8. Առորյա գործնական աշխատանքների համար. բյուրոն կարող է ընտրել 3 հոգուց վոչ ավելի բաղկացած պրեզիդիում:

VIII. Խ. Ս. Հ. Մ.-ի ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

1. Պիոներական շարժման ասպարեզում Ռ. Լ. Կ. Յե. Մ. կոմիտեների աշխատանքներին գործնական ղեկավարություն ցույց տալու և աշխատանքի խնդիրները շահագրգռված հիմնարկների (Լուսժողկոմի, Հոգժողկոմի, Պրոֆմիության և այլ հիմնարկների) հետ համաձայնեցնելու, նույնպես և պատ. շարժման մեթոդական խնդիրները լուծելու համար Ռ. Լ. Կ. Յե. Մ. Կենտկոմին կից նրա բյուրոյի անմիջական ղեկավարութեամբ ստեղծվում է պատանի պիոներների կենտրոնական բյուրո՝ բաժնի իրավունքներով:

Կենտրոնական բյուրոյի մեջ մտնում են նախագահը, պատանեկական շարժման ասպարեզում մշտական աշխատող՝ Ռ. Լ. Կ. Յե. Մ. Կենտկոմի անդամ, ներկայացուցիչներ Ռ. Կ. Կ. կենտկոմի ազիտպրոպ բաժնի, աշխատավորուհու բաժնի, գլխոցդասավարի, Ա. Մ. Հ. Կ. Խորհրդի, Փիզկուլտի գերագույն Խորհրդի, Առժողկոմատի, ԿԻՄ-ի գործկոմի և կենտկոմի կողմից անհատորեն ընտրված պիոներական գործնական աշխատողները:

2. Մեթոդիկ խնդիրները մշակելու համար, Կենտրոնական բյուրոյին կից հիմնվում է մեթոդական կոլեգիա:

3. Կենտրոնական բյուրոն հրատարակում է հանդես յերեխաների և հանդես ղեկավարների համար:

4. Առորյա գործնական աշխատանքները վարելու համար, Կենտրոնական բյուրոն ստանձնացնում է 5—7 հոգուց բաղկացած նախագահություն:

XI. ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՈՐԵՆՔՆԵՐԸ

1. Պիոները հավատարիմ է բանվոր դասակարգի գործին—ԼԵՆԻՆԻ ավանդներին:

2. Պիոները կոմսոմոլիստի և կոմունիստի կրտսեր յեղբայրն է ու ոգնականը:

3. Պիոները ընկեր է ամբողջ աշխարհի պիոներներին և բանվորների ու գյուղացիների չերեխաներին:

4. Պիոները կազմակերպում է իր շրջապատի յերեխաներին և նրանց հետ մասնակցում շրջապատի կյանքին: Պիոները բոլոր չերեխաներին որինակ է:

5. Պիոները ձգտում է գիտության: Գիտությունը և կարելիությունը ուժ է բանվոր դասակարգի պայքարում:

X. ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պիոները պաշտպանում է իր և ուրիշների առողջությունը. նա տոկուն է և աշխույժ. վեր է կենում առավոտը վաղ, խնամքով լվացվում, կառարում է մարզանք:

2. Պիոները իր և ուրիշների ժամանակը թանգ է գնահատում. իր գործը կատարում է արագ և խնամքով:

3. Պիոները աշխատասեր է և համառ. նա կարող է բոլոր պայմաններում աշխատել և գտնել ամեն տեսակի դրություններից դուրս գալու յեղքը:

4. Պիոները հասարակական գույքին, զրքերին, հագուստին և արհեստանոցի պիտույքներին խնայողաբար և վերաբեվում:

5. Պիոները չի ծխում, չի հայհոյում:

XI. ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՅԵՐԴՈՒՄ

Սահմանվում է հանդիսավոր յերգման հետևյալ ձևը: Յես, Խ. Ս. Հ. Մ. պատանի պիոներս, իմ ընկերներին առաջ տալիս եմ հանդիսավոր յերգում վոր՝

1. Կանգուն կլինեմ բանվոր դասակարգի պայքարում, հանուն ամբողջ աշխարհի բանվորների ու գյուղացիների ազատագրման:

2. Ազնիվ ու անշեղ կկատարեմ ԻԼՅԻՉԻ պատգամները, պիոներական որենքներն ու սովորույթները:

XII. ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Հոկտեմբերիկը ոգնում է պիոներներին, կոմյերիտականներին, կոմունիստներին, բանվորներին և գյուղացուն:

2. Հոկտեմբերիկը ձգտում է դառնալ պիոներ:

3. Հոկտեմբերիկը հետևում է իր մարմնի և հագուստի մաքրությանը:

4. Հոկտեմբերիկը սիրում է աշխատել:

XIII. ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՅԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԲԱՆՆ ՈՒ ԼՈՁՈՒՆԳԸ

«Բանվոր դասակարգի ազատագրման պայքարին, պատրաստ» պատասխանը «Միշտ պատրաստ եմք»:

Հիմնական լոգունդը «փոխարինողներին փոխարինում եմք»:

XIV. ՊԻՈՆԵՐԻ ՆՇԱՆԸ

Խ. Ս. Հ. Մ. ի պիոներական կազմակերպությունների համար, հաստատվում է հետևյալ միասնական նշանը՝ կարմիր դրոշակի վրա, մուրճ և մանգաղի մեջ, հինգ փայտի վրա վառվող խարուկ-բոցի չերեք լեզվակներով: Մանգաղի վրա գրված է «Պատրաստ»:

XV. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Բոլոր պիոներները և հոկտեմբերիկները զգեստավորվում են միատեսակ. վերնաշապիկը բաց գույնի, տղաները կարճ տրուսիկներ, իսկ աղջիկները մուգ գույնի շրջագեստ մինչև ծնկները:

2. Բոլոր պիոներները և հոկտեմբերիկները կրում են կարմիր վզկապ:

3. Ղեկավարները և առանձին պիոներները ուրիշ նշան և կամ ուրիշ հատկանիշներ չեն կրում:

4. Ողակը ունի կարմիր գույնի յերեք անկյունանի գրողակ, վորի մեկ յերեսին նկարված է ողակի սիմվոլը (հեղափոխական ղեկավարների նկարը կամ հեղափոխական-աշխատանքային նշանը), իսկ մյուս յերեսին գրված է այսինչ կոլեկտիվի ողակ:

5. Կոլեկտիվն ունի քառանկյունի կարմիր գրողակ, վորի մեկ յերեսին նկարված է պիոներական նշան և գրված է նշանաբանը: Իսկ մյուս յերեսին կոլեկտիվի անունը և վոր ձեռնարկության կից («Արարատ» գործարանին կից «26-ի» անվան կոլեկտիվ):

6. Այդպիսի գրողակ ունի նաև դավառի ամբողջ կադմակերպութունը:

XVI. ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՅԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐԻ ԲԱՐԵՎԸ

1. Հաստատվում է բարեի հետևյալ ձևը:

Այ ձեռքի 5 մատը միացած բարձրացվում է գլխից վեր:

5 մատը աշխարհի մասերն են, ուր կան շահագործվողներ և վորոնց ազատագրման համար պիոներները պայքարում են:

Գլխից բարձր է, վորովհետև պրոլետարիատի շահերը բարձր են պիոներների անհատական շահերից:



